2005, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (203)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Գէորգ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ**
Ամենայն Հայոց կաթողիկոս
(ծն. 1868, կթղ. 1945-1954 թթ.)

## «Աշխարհը դրսից փայլուն է եւ գեղեցիկ, բայց ներսից՝ մութ եւ խաւար, ինչպէս մահը»



Երբ պատահում է ինձ կանգնել բարձունքի վրայ եւ դիտել առաջս բացուած բնութեան գեղեցիկ ու հարուստ տեսարանները, միշտ յիշում եմ գերման ժողովրդի իմաստուն առածը թէ՝ «Աշխարհը դրսից փայլուն ու գեղեցիկ է, բայց ներսից՝ մութ ու խաւար, ինչպէս մահը»:

Ես տեսնում եմ արեւի ճառագայթների տակ փայլփլող դաշտեր՝ ծածկուած նորաբաց երփներանգ սիրուն ծաղիկներով, անտառներ՝ անցեալը վերյիշեցնող մրմունջներով, գլխիս վերեւը՝ կապոյտ երկնքի երեսին հանդարտ լողացող ճերմակ ամպեր, որոնք բոլորը ներդաշնակ երգում են՝ խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն:

Ես տեսնում եմ ձորերում ու սարալանջերում կողք կողքի ընկած գեղեցիկ ու անհոգ գիւղեր՝ մարդկային համակերպութեան վկայ շարան-շարան տներով եւ մարդու հոգուն խաղաղութիւն բերող տաճարներով, աչուըները վեր սեւեռած բարձր ծառեր, պատուհանների մէջ խաղացող կենսատու արեւ, ծաղիկներով ու պտուղներով զարդարուն պարտէզներ, կայտառ մանուկներով լի եռուն հրապարակներ, մարդկային աշխատանքի վկայ արտեր, կառքերով ու շրջիկներով լի փողոցներ: Այս բոլորը մի գեղեցիկ տեսարան, հմայիչ պատկեր է խաղաղ ու բարգաւաճող կեանքի: Սակայն այս բոլորը դրսից է, այլ է պատկերը ներսից:

Մօտեցէ՛ք այդ գեղեցկութիւններին, մտէ՛ք ներս, խօսեցրէ՛ք մարդոց, եւ իսկոյն պատկերը կը փոխուի:

- Ո՞վ է ապրում այս յարկի տակ:
- Յոգսի բեռան տակ կուչ ընկած մէկը, որ օրնիբուն տանջւում եւ մաքառում է իւր մեծ ընտանիքի հացը հայթայթելու համար, որ պարտականութիւն ունի անդուլ աշխատելու եւ իրաւունք չունի հանգստանալու:
- Ո՞վ է ապրում ա՛յս յարկի տակ:
- Յիւանդ մէկը՝ գիշեր ու ցերեկ հոգեմաշ ցաւերով բռնուած:
- Ո՞վ է ապրում ա՛յս յարկի տակ:
- Կռիւն ու անմիաբանութիւնը. որդին հակառակ է հօրը, մայրը՝ աղջկան. հարազատներ, որոնք կեանքի դառնութիւնը քաղցրացնելու եւ բեռը թեթեւացնելու փոխարէն ե՛ւս առաւել դառնացնում են եւ ծանրացնում:
- Յապա ա՞յս յարկի տակ:
- Ընչաքաղցութիւնն ու ագահութիւնը:
- Իսկ այստե՞ղ:
- Յուսախաբ երազներ:
- Յապա այստե՞ղ:
- Կարիքն ու անարգանքը:

Մէջընդմէջ բացառաբար կարծատեւ երջանկութիւն, որ իւր երկչոտ նայուածքով տիրում է շուրջը՝ իմանալու, թէ ե՞րբ է վախճանը այդ քաղցրիկ ժամերի:

Այսպէս, սիրելի՛ք, համարեա իւրաքանչիւր մարդու կեանք ունի իւր խաւար կողմերը, որ կը տեսնենք, եթէ ի մօտոյ դիտելու լինինք:

Վերոյիշեալ ժողովրդական առածը ճշմարտւում է նաեւ, երբ դիտում ես ականաւոր մարդու կեանք: Յեռուից փայլուն է եւ հմայիչ, մեծ անուն ունի, պատիւներ է վայելում. նրա ճամփան լայն է ու հարթ, խօսքն՝ իմաստուն ու բարի. ամէնքը խոնարհւում են նրա առաջ եւ հետեւում նրան: Սակայն փորձեցէք մօտենալ եւ կը տեսնէք, որ նրա կեանքն էլ լի է տանջանքներով ու յուսախաբութիւններով, մշտական կռուի մէջ իւր հակառակորդների հետ. միայն մեծութիւնն ու կատարելութիւնը չի եղել նրա նաւին ղեկավար, այլեւ անկատարութիւնն ու անյաջողութիւնը, որոնց յաղթելո՛վ միայն մեծացել ու հասել է կատարելութեան ու փառքի:

Այսպէս ե՛ւ բնութեան, ե՛ւ մարդկային կեանքի մէջ այլ է պատկերը հեռուից եւ այլ՝ մօտից, այլ է արտաքինը, եւ այլ՝ ներքինը:

Այս անմխիթար երեւոյթի հակառակ՝ մխիթարական է այն, որ կան նաեւ մարդիկ, որոնց ներսը նոյնքան գեղեցիկ է ու պայծառ, որքան եւ դուրսը. որոնք մօտից նոյնքան հրապուրիչ են եւ հմայիչ, որքան եւ հեռուից: Նոցա ներսը զօրեղ լոյս կայ, որ արտաքին ողորմելի եւ խղճուկ խաւարին յաղթահարում է ու կեանքի թախծոտ ու աղօտ կողմերը վանում եւ լուսաւորում է: Մեր հոգու այս լուսաւոր ոյժն է մատնանշում Յիսուս՝ ասելով. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ.... մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի՛ զանգիտեսցեն» (Յովհ. ԺԴ 27):

Խաղաղութի՛ւն. շատ հրապուրիչ խօսք. բայց ի՞նչ է եւ ո՞ւր է խաղաղութիւնը:

Երեւի բոլորիս էլ ծանօթ կը լինի այն խաղաղութիւնը, որ երբեմն որոնում ենք բնութեան գրկում: Մենք յոգնած ենք մարմնով եւ հոգով. յոգնած ենք ֆիզիքական աշխատանքներից եւ հոգեկան յոյզերից: Եւ ահա թողնում ենք քաղաքն ու նրա աղմկալից կեանքը, քաշւում բնութեան գիրկը եւ այնտեղ մենութեան մէջ խաղաղութիւն որոնում: Մտնում ենք անտառ. մեր գլխին կամարւում են բարձր ու սեգ կանաչազարդ ծառեր. անհոգ ծծում ենք նոցա զովարար շունչը. պառկում ենք կանաչ գետնի վրայ, որ գորգի նման փռուած է մեր ոտքի տակ, եւ վեր նայում դէպի անհունը տարածուող կապոյտ երկնքին: Գալիս են ամպեր, հրաշալի պատկերներ ձեւացնում եւ կազմալուծւում ու անցնում-գնում: Ամէն ինչ խաղաղ է բնութեան մէջ. տերեւների սօսափիւնն ու զոյգ թռչունների անոյշ դայլայլիկն է միայն բնութեան հանգիստը խանգարում: Սակայն հարցնում եմ ձեզ՝ ճշմարիտ տեւակա՞ն է հանգիստ ու խաղա՞ղ ենք, եւ արդեօք տեւակա՞ն է մեր հանգիստը:

Շարունակությունը՝ էջ 2

21 օգոստոսի

## Տոն ծննդյան Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի



*ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ*

*Քաջ գիտենք, թե որպես հայր որքան խորն է այս օրերի Ձեր ցավը, որքան դառն են Ձեր խոհերն ու մտորումները, բայց եւ գիտենք, թե նաեւ որքան անհրաժեշտ է Ձեզ՝ Ձեր մնացյալ զավակաց, այն է՝ համայն հայ ժողովրդի սերն ու սատարումը, իսկ ամենագլխավորը՝ գիտակցումը, որ Հայոց Հայրապետն անձ չէ, այլ լուսավորչահիմն Հայոց հայրապետության գաղափարի մարմնացումը, մարմնացումն այն Հովվի, Ով ձայնում է. «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց», «Եկայք առ իս...»:*

*Ուստի, Ձեր ծննդյան օրն առիթ ընդունելով, թույլ տվեք մեր աղոթքն առաքել Աստծուն եւ խնդրել, որ երկար տարիների անխռով կյանք պարգեւի Ձեզ, առավել զորացնի, ամրացնի Ձեր միտքն ու ոգին, Ձեր հայրական ու մարդկային իմաստությունը, ինչու չէ, նաեւ մեր՝ Ձեր հոտի ողջախոհությունը, որպեսզի գլխավորելով նրան՝ կարողանաք ասել. «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն»:*

*Որդիական սիրով ու ակնածանքով՝*

***ՔՀԿ***

***«Քրիստոնյա Յայաստան» թերթի աշխատակազմ եւ հեղինակներ***

## Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Օգոստոսի 2-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն: Վարդապետական աշխատանքներ էին ներկայացրել Մայր Աթոռի միաբաններ Տ. Իգնատիոս աբղ. Մալխասյանը՝ «Խրիմյան Յայրիկ» եւ Տ. Զոհրաբ աբղ. Կոստանյանը՝ «Յայրաբանական հետազոտություն եւ քննական ուսումնասիրություն» թեմաներով:

Քննիչ հանձնաժողովը, որի անդամներն էին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն ու Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, նախագահում էր Տ. Ներսես արք. Պոզապալյանը: Երկու աշխատանքներն էլ արժանացան հանձնաժողովի հավանությանը:

Առաջիկայում Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի կունենա նորընծա վարդապետների տվչության արարողությունը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՅԱՄԱԿԱՐԳ***

## ԳԵՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ

**Ամենայն Հայոց կաթողիկոս**
**(ծն. 1868, կթղ. 1945-1954 թթ.)**

# «Աշխարհը դրսից փայլուն է եւ գեղեցիկ, բայց ներսից՝ մութ եւ խաւար, ինչպէս մահը»

*Սկիզբը՝ էջ 1*

Արտաքուստ՝ այո՛, հանգիստ է մեր մարմինը, սակայն ներքուստ վերստին սկսում է յուզուել մեր հոգին: Այո՛, փախանք քաղաքի աղմկալից կեանքից, խոյս տուինք արտաքին անհանգստութիւնից, բայց չկարողացանք ազատուել մեր հոգին վրդովող պայմաններից: Մենք զգում ենք, թէ ո՛րքան մեր հոգին ներքնապէս դեռ ենթակայ է անցեալ անհանգստութեան. մեր մտքերը խո-



սում են. նոքա յիշեցնում են երէկուայ եւ եռանդի (գրաբար. երէկ չէ միւս օրը - խմբ.) դէպքերը, որոնք յուզում էին մեզ. նոքա պատմում են ծրագրների, գործերի եւ մարդոց, հոգսերի, վտանգների եւ անյաջողութիւնների մասին. նոքա անդադար յիշեցնում են մեր փոքրիկ եսի շուրջը կատարուած անցուդարձը, եւ մենք անկարող ենք լինում մոռանալ մեր փոքրիկ եսը իւր նեղ ապրումներով: Եւ այսպէս մենք հեռու ենք մնում հոգու խաղաղութիւն վայելելուց:

Բայց ահա աչքդ ընկնում է ծառի մի ճիւղի վրայ, որ ծաղիկներով ծածկուած է, որոնց գոյներն ու ձեւերը՝ այնքան հրապուրիչ եւ զմայլեցուցիչ, որ վերացնում են քեզ, եւ դու յափշտակութեան մէջ ամէն ինչ մոռանում ես: Մտքերդ լռում են, յոյզերդ՝ մարում, ճակատդ՝ ազատւում կնճիռներից, կուրծքդ՝ խաղաղ իւր ելեւէջը կատարում, սիրտդ՝ հանգիստ բաբախում, եւ շունչդ՝ կանոնաւոր ընթանում: Եւ այսպէս հոգուդ անհանգստութիւնը փոխւում է երջանիկ խաղաղութեան:

Բարեպաշտ եղբայրնե՛ր եւ քոյրեր, լոկ բնութեան գրկում լինելը մեզ կուտայ միայն մարմնի հանգիստ ու թարմութիւն եւ ո՛չ հոգու: Սակայն թանկագին են այն րոպէները, որոնք մեզ կատարեալ խաղաղութիւն են պարգեւում՝ հանգիստ տալով ե՛ւ մեր հոգուն, ե՛ւ մեր մարմնին: Այդ րոպէները յափշտակութեան րոպէներն են, երբ մենք ազատւում ենք մեր ներքին աշխարհի տիրապետութիւնից, երբ մեր միտքը այլեւս չի զբաղւում մեր փոքրիկ եսի ապրումներով, երբ մեր սիրտը այլեւս չի յուզւում մեր չնչին եսի նեղ ցանկութիւններով ու հակումներով, այլ նոքա ընկղմելով բնութեան հրաշագեղ ու մեծ ովկիանի մէջ՝ ազատում են մեր հոգին իր խեղդող ճիրաններից:

Այսպէս ազատում են մեզ մեր փոքրիկ եսի ստրկութիւնից նաեւ գեղարուեստական մեծ ստեղծագործութիւնները՝ հանճարեղ նկարիչների նկարները, մեծ քանդակագործների մարմարիոնէ կամ երաժիշտների գործերը: Նոքա յափշտակում են մեզ՝ խորասուզելով գեղարուեստի լայն աշխարհը. մենք մոռանում ենք մեր եսը իւր ապրումներով, մեզ տիրում է խորհրդաւոր ու տեւական խաղաղութիւն՝ ընդունակ դարձնելով մեզ եսից դուրս լայն ապրումներ ունենալու:

Խաղաղութիւնը միշտ կայ, երբ մարդ կարողանում է կորցնել իւր սեփական փոքրիկ եսը եւ գտնում փոխարէնը աւելի բարձրը եւ մեծը՝ հանրական եսը՝ ըստ Աւետարանին թէ՝ «Ձի որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա» (Մատթ. ԺԶ 25):

Այս ճշմարտութիւնը կրօնի բազմաթիւ գեղեցիկ գաղտնիքներից մէկն է:

Յիսուս խորապէս գիտակցում է, որ ունի մի ներքին իւրատեսակ հոգու խաղաղութիւն, որ ուղեկից է Իրեն կեանքի բոլոր մաքառումների, վտանգների եւ տառապանքների ժամանակ: Այդ խաղաղութեան աղբիւրը երկնաւոր Հօրն անձնատուր լինելն է. ահա թէ ի՛նչ խաղաղութիւն է կամենում թողնել Յիսուս Իւր աշակերտներին ու հետեւորդներին:

Յիսուս Իւր անձն ու կեանքը նուիրել է Իւր երկնաւոր Հօրը, Նրա կամքը Իրեն ուղեցոյց ընտրել, այն խոր համոզմամբ, որ Նրա ուղին բարի է եւ ճշմարիտ, եւ կամքը՝ սուրբ: Այո՛, քաղցր է վայելել Յիսուսի վայելած հոգու խաղաղութիւնը, բայց դժուարին է ժառանգել Նրա աւանդը: Սակայն եթէ ստուգապէս մենք կրօն ունինք, պէտք է նա արտայայտուի. նրա ազատութեան շնորհիւ պէտք է կարողանանք մեր անձը Աստծուն նուիրել, Նրա կամքին կատարելապէս հնազանդել, որ մեր անհատական ճղճիմ եսը լուծուի հանրական եսի մէջ եւ ծնունդ տայ մեր հոգու ներքին անդորրութեան՝ Յիսուսի քարոզած խաղաղութեան: Այնժամ մենք վեր կը նայենք եւ կը տեսնենք մեր հոգու աչքերով կենդանի Աստծուն, որ օրինակ է մեզ, որ առաջնորդ է մեզ: Մեր միտքն ու զգացմունքը կը կապուին Նրա հետ, մենք կը տեսնենք ու կը զգանք Նրա բարութիւնը, մեծութիւնն ու փառքը: Նրա ներկայութիւնը կ'ընդլայնէ մեր եսի սահմանափակութիւնը, կը հաստատէ մեր մէջ վեհ խաղաղութիւն, եւ կը կատարուի մեծագոյն հրաշքը, որով չարը՝ բարու եւ տանջանքը օրհնութեան կը փոխուի:

Ով այս հոգեկան վիճակն ունի, նրա ներսը լուսոյ ճրագ կայ, որ երկրային վիճակի ամէն մութ կողմերը ընդունակ է լուսաւորելու: Այսպիսի անհատներն են, որոնց հետ ի մօտոյ ծանօթանալը հաճոյք է, եւ որոնց ընկերութիւնը թէ՛ անհատների եւ թէ՛ հասարակութեան համար ոգեւորիչ եւ խրախուսիչ խթան է:

Ստեղծեցէ՛ք, եղբայրներ եւ քոյրեր, ձեր մէջ մի այդպիսի հոգեկան վիճակ. վառեցէ՛ք ձեր մէջ լուսոյ ճրագ, եւ ձեր հոգու մէջ կը հնչէ Փրկչի ձայնը. «Մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի՛ զանգիտեսցեն» (Յովհ. ԺԴ 27):

Շնորհք եւ ողորմութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ՝ ընդ ամենեսեան: Ամէն:

**Չի խօսուած ցարդ - 16 նոյեմբերի 1921թ.**
**ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 454, ց. 1, գ. 22, թ. 1-4, ինքնագիր, բնագիր**

## Ի Տեր հանգյավ Տ. Զավեն աբեղա Հակոբյանը



**Օգոստոսի 8-ին Եղեգնաձորից Նորավանք վերադարձի ճանապարհին ավտովթարից եղերական մահով վախճանվեց Նորավանքի հոգեւոր տեսուչ Տ. Զավեն աբեղա Հակոբյանը:**

**Տ. Զավեն աբեղա Հակոբյանը (ավազանի անունը՝ Արման) ծնվել է 1977 թ. մայիսի 12-ին Էջմիածին քաղաքում:**

**1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում:**

**1989 թվականից ծառայել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում:**

**1992-1994 թթ. ուսանել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում:**

**1995 թ. ընդունվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարան եւ 2000 թ. ավարտել այն:**

**2000-2001 թթ. մասնակցել է Ամերիկյան համալսարանում կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:**

**2001 թվականից սովորում էր ԵՊՀ-ի Իրավաբանական ֆակուլտետում:**

**2000-2004 թթ. աշխատել է Կաթողիկոսարանում՝ որպես գործավար քարտուղար:**

**2002 թ. ձեռնադրվել է սարկավագ:**

**2003 թ. ապրիլին պաշտպանել է ավարտաճառ՝ «Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանց. կյանքը, հոգեւոր-հասարակական գործունեությունը, գիտագրական ժառանգությունը» թեմայով:**

**2004 թ. ապրիլից նշանակվել է աշխատանքի Մայր Աթոռի Ճարտարապետա-շինարարական բաժնում:**

**2004 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:**

**2005 թ. փետրվարի 1-ից Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ նշանակվել էր Նորավանքի հոգեւոր տեսուչ:**

**Ծառայության մեջ հոգելույս հայր սուրբը դրսեւորել է իրեն որպես ծառայասեր, նվիրյալ եւ նախանձախնդիր հոգեւորական:**

**Օգոստոսի 11-ին հոգելույս հայր սուրբի վերջին օծման եւ հուղարկավորության արարողություններից հետո՝ մարմինն ամփոփվեց միաբանական գերեզմանատանը:**

**«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի, ամէն»:**

## ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

# ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 14*

Նրանք, ովքեր աստվածպաշտությունը չեն սահմանափակում որեւէ վայրում, այլ պաշտում են Նրան հոգով, ինչպես Պողոսն է ասում. «Աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրնե՛ր, ողորմությամբ Աստծո, որ պատրաստեք ձեր մարմինները որպես զոհ կենդանի, սուրբ, աստվածահաճո. ա՛յդ է ձեր բանական պաշտամունքը»: Երբ Քրիստոս ասում է. «Հոգի է Աստված», դրանով ցույց է տալիս, որ Նա անմարմին է: Իսկ անմարմինին վայելում է այդպիսի երկրպագություն, եւ պետք է մատուցվի այն, ինչ որ մեր մեջ անմարմին է, այսինքն՝ հոգով եւ մաքուր մտքով: Այդ պատճառով էլ ասում է. «Նրա երկրպագուները պետք է հոգով եւ ճշմարտությամբ երկրպագեն»: Քանի որ ո՛չ սամարացիները, ո՛չ հրեաները հոգ չէին տանում հոգու մասին, այլ շատ մեծ հոգածություն էին ցուցաբերում մարմնի նկատմամբ՝ մաքրելով այն բոլոր հնարավոր կերպերով, այդ պատճառով էլ Նա ասում է, որ ոչ թե մարմնի մաքրությամբ, այլ նրանով, որ մեր մեջ անմարմին է, այսինքն՝ մտքով պետք է ծառայել Անմարմինին: Այսպիսով, հարկ է ո՛չ թե ոչխար կամ զվարակներ, այլ ինքդ քեզ իբրեւ Աստծո ողջակեզ բերել. սա նշանակում է, որ ոչ թե պետք է ներկայանալ իբրեւ կենդանի զոհ, այլ որ պետք է ճշմարտությամբ երկրպագել: Նախկին արարողությունները՝ թլփատությունը, ողջակեզները, զոհերը, խնկարկությունները, միայն ստվերն էին [եւ ոչ իրողությունների բուն կերպարանքը]. այժմ ամբողջը իրական է: Այժմ ոչ թե պետք է թլփատել մարմինը, այլ նենգ մտքերը, խաչել սեփական անձը, մեռցնել ցանկությունները: Կինը զարմացավ Նրա այդպիսի խոսքերից եւ որովհետեւ ի զորու չէր ըմբռնելու այդ վարդապետության վսեմությունը, լսի՛ր, թե ինչ է ասում. «Գիտեմ, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կգա. երբ Նա գա, մեզ ամեն ինչ կպատմի»: Հիսուս նրան ասաց. «Այդ ես եմ, որ խոսում եմ քեզ հետ»: Հապա ինչո՞ւ էին սամարացիները սպասում Քրիստոսին, երբ ընդունում էին միայն Մովսեսին: Հենց Մովսեսի գրքերից:



Ամենասկզբից իսկ Նա հայտնում է Որդու մասին. «Մարդ ստեղծենք մեր պատկերով եւ մեր նմանությամբ»: [«Ստեղծենք», «մեր»] հոգնակի թվով են դրված, որովհետեւ վերաբերում է [նաեւ] Որդուն: Մամբրեի կաղնու մոտ Աբրահամի հետ զրուցողը Որդին էր: Հակոբը նույնպես Նրա մասին մարգարեացավ՝ ասելով. «Հուդայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչեւ որ գա նա, ում պատկանում են հանդերձյալները, Նրա՛ն են սպասում ժողովուրդները»: Եվ ինքը՝ Մովսեսը, ասում է. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք»: Նմանապես օձի, Մովսեսի գավազանի, Իսահակի, գառան եւ բազում այլ օրինակներ կարող են Նրա ներկայության մասին ազդարարել բոլոր նրանց, ովքեր կամենում են հասկանալ այդ: Կհարցնես, թե՝ ինչո՞ւ Քրիստոս այդ կնոջը ցույց չտվեց այս նախօրինակները, երբ Նիկոդեմոսին հիշեցրեց օձի, իսկ Նաթանայելին՝ Իր մասին մարգարեությունը, ինչո՞ւ այդ կնոջն այդ մասին ոչինչ չասաց: Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով: Որովհետեւ նրանք այրեր էին, որոնք զբաղվում էին այդ հարցերով, իսկ նա կին էր՝ խեղճ, անուս, Գրքերից անտեղյակ: Եվ հետո Ինքը չէր էլ խոսում նրա հետ Գրքերից, այլ նրա ուշադրությունը Իր վրա հրավիրեց [հավիտենական] ջրի խոսումով եւ Իր ամենագիտությամբ՝ այսպիսով հիշեցնելով նրան Քրիստոսի մասին, ի վերջո բացահայտեց Իրեն: Եթե Հիսուս սամարացի կնոջն այդ մասին ասեր ամենասկզբում, երբ նա դեռ չէր էլ հարցրել Իրեն, ապա այդ կնոջը կթվար, թե Հիսուս սին ու անիրականանալի խոսքեր է ասում: Իսկ այժմ, սակավ առ սակավ նրան հիշեցնելով, ճիշտ ժամանակին էլ բացահայտում է Իրեն: Հրեաներին, չնայած նրանք հաճախ ասում էին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթե դու ես Քրիստոսը, համարձակ ասա՛ մեզ», Նա հստակ պատասխան չտվեց, իսկ սամարացի կնոջը Իր մասին ուղղակի ասաց, որ Ինքն է Քրիստոսը: Եվ այս այն պատճառով, որ այդ կինն ավելի բարեմիտ էր, քան հրեաները. որոնք չէին հարցնում՝ Նրանից սովորելու համար, այլ որպեսզի միշտապես ծաղրեն Նրան: Իսկ եթե նրանք կամենային սովորել, ապա դրա համար բավական կլիներ Նրա հետ խոսելը, նաեւ Գրքերը եւ Նրա հրաշագործությունները: Բայց կինը ինչ որ ասում էր, ասում էր սրտի խորքից, մաքուր մտադրությամբ, եւ այդ երեւում է նրա հաջորդ գործողություններից: Նա ե՛ւ ինքը լսեց Նրան եւ հավատաց, ե՛ւ ուրիշներին հրավիրեց հավատալու. բոլորի համար տեսանելի են այդ կնոջ ջանքերն ու հավատը: «Եվ այդ խոսքի վրա եկան Նրա աշակերտները»: Ճիշտ ժամանակին եկան նրանք, քանի որ Հիսուս ավարտեց Իր խոսքը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԹՎԻ ԵՎ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## Մովսեսը սյունեցի՞



*Սկիզբը՝ թիվ 11-14*

Մովսես Խորենացուն սյունեցի հայտարարելու մյուս փաստարկը, ըստ Ստ. Մալխասյանցի, նրա տոհմասիրությունն է. այն, որ Պատմահայրը մեծ գովեստով է խոսում Սյունյաց տոհմի նախահայր Սիսակի եւ նրա տոհմից սերված՝ Հայաստանի հյուսիսարեւելյան կուսակալ Առանի մասին (Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, էջ 279): Սիսակին տալիս է շքեղ մակդիրներ՝ «այր սէգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ գեղեցկաղեղն *(Մ. Խորենացի, Պատմութիւն, Ա, ԺԲ, էջ 41)*, իսկ Առանին՝ «այր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին» *(նույն տեղում, Բ, Ը, էջ 113)*:

Մեր կարծիքով, սակայն, այս ամենի մեջ չպետք է տեսնել սեփական տոհմը պանծացնելու միտում. նշված մակդիրները միանշանակ Սյունյաց տոհմի գնահատականը չեն եւ ամենեւին էլ թելադրված չեն Պատմահոր տոհմային ծագումով, ինչպես բացատրում է անվանի հայագետը, այլ բխում են այն ազգանվեր սիրուց, որ Պատմահայրը տածում էր հայ ժողովրդի նախահայր Հայկի եւ նրա բոլոր սերունդների հանդեպ: Այսպես՝ Արայան Արայի որդուն՝ Սոսանվեր Անուշավանին, Պատմահայրը նույն ոճով անվանում է «ամենահարուստ եւ շատահանճար յիր եւ ի բան» (գործով ամենակարող, խոսքով մեծահանճար, *(նույն տեղում, Ա, Ի (ԻԱ), էջ 63)*. Խորենացին պաշտելու չափ մեծարում է Տիգրան Երվանդյանին՝ կոչելով նրան «անձնեայն եւ թիկնաւէտն, առոգաբարձն եւ գեղեցկոտն», «մեծիմաստ եւ պերճաբան», «արդարադատ եւ հաւասարասէր» *(նույն տեղում, Ա, ԻԴ (ԻԵ), էջ 73)*. Նա պարծանքով է խոսում Հայկից սերված բոլոր թագավորների մասին՝ որպես բնիկ հայ պսակավորների՝ հակադրելով նրանց եկվոր պարթեւներին եւ հատկապես օտար թագավորներին. «Ահա այժմ ես զվարճանում եմ ոչ փոքր ուրախություն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում» *(Մ. Խորենացի, Ա, ԻԱ, էջ 77-78)*, երանի է տալիս հայկազն թագավորների ժամանակին, բայց նկատելով, որ քրիստոնյայի համար պատշաճ չէ փափագել հեթանոս ժամանակը, խոսքը շարունակում է այսպես. «Որովհետեւ մեր թագավորների մեջ ինձ այս մարդիկ են սիրելի իբրեւ բնիկներ, արյունակիցներ եւ իսկական հարազատներ: Ես շատ կփափագեի, որ ա՛յն ժամանակ Փրկիչն եկած եւ ինձ գտած լիներ, որ նրանց ժամանակ ես աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի եւ այժմյան վտանգներից խուսափած լինեի: Բայց շատ վաղ մեզանից այդ դրությունը փախավ, գուցե նաեւ վիճակը» *(Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Ա, ԻԲ, աշխարհաբար թարգմ.՝ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1968, էջ 108)*.

Այդպես էլ Սյունյաց նախահայր Սիսակը եւ Աղվանից կուսակալ Առանը Խորենացու համար բնիկ հայկական սերունդներ էին, եւ միայն այս պատճառով արյունակից ու հարազատ էին նրան:

Երրորդ փաստարկը Խորենացու հակակրանքն է Մամիկոնյան տան վերաբերմամբ. «Խորենացուն սյունեցի ենթադրելով՝ հասկանալի կդառնա դրա պատճառը,- գրում է Ստ. Մալխասյանցը,- Խորենացին բնականապես հակակրում է իր տոհմին թշնամի եւ հակառակորդ տոհմին» *(Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, էջ 280)*, որ նա հետեւանք է համարում 440-480-ական թվերին այդ երկու տոհմերի միջեւ տիրող անհաշտ թշնամանքի:

Խորենացու հակակրանքը Մամիկոնյան տոհմի հանդեպ հաստատելու համար անվանի հայագետը վկայակոչում է 451 թ. հայոց ապստամբության շրջանում Վարդան Մամիկոնյանի եւ Վասակ Սյունու, իսկ 480-ական թվերի ապստամբության ժամանակ Վահան Մամիկոնյանի եւ Գդիհոնի հակամարտությունը՝ մոռանալով, որ առաջին դեպքում Վարդան Մամիկոնյանի զորքի մեջ քաջաբար կռվում էին Բակուր եւ Բաբկեն Սյունյաց իշխանները, իսկ երկրորդ դեպքում Վահան Մամիկոնյանի հավատարիմ զինակիցներն էին <u>լավ այր</u> Բաբիկ Սյունին եւ անձնուրաց Սյունյաց Բաբկեն իշխանը *(Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, դրուագ Գ, Տփղիս, 1904 թ.)*.

Սրանով Խորենացուն պարզապես վերագրվում է տոհմային կույր ատելություն այն տոհմի նկատմամբ, որի երեւելի գործիչները հայոց պատմության մեջ անուրանալի դեր են խաղացել:

Մեր կարծիքով, սակայն, Խորենացին պատմական անձանց գնահատում է ըստ իրենց անմիջական գործերի եւ տվյալ դեպքում գրեթե հավասարապես անաչառ վերաբերմունք է դրսեւորում թե՛ Սյունյաց նախարարների եւ թե՛ Մամիկոնյանների նկատմամբ: Օրինակ՝ անկախ Սյունյաց տոհմի նախահայր Սիսակի հանդեպ ունեցած վերապահումից՝ Պատմահայրը հաղորդում է, որ պարսից Շապուհ արքան Հայոց Տիրան թագավորին կուրացնելուց եւ գահազուրկ անելուց հետո, թեեւ գահ նստեցրեց նրա որդի Արշակին, բայց որպես հակոտնյա՝ Հայոց արեւելյան զորքի սպարապետ կարգեց իրեն հավատարիմ Վաղինակ Սյունուն եւ Հայաստանը հանձնեց նրան *(Մ. Խորենացի, Պատմութիւն, Գ, ԺԸ, էջ 277)*.

Խիստ չափավոր է նաեւ Խորենացու վերաբերմունքը մարզպան Վասակ Սյունու նկատմամբ: Այն դեպքում, երբ Կորյունը Սյունյաց իշխան Վասակին ներբողում է ճոխ մակդիրներով՝ ակներեւաբար նկատի առնելով նրա պետական իմաստությունը որպես մարզպանի՝ «քաջ Սիսականն Վասակ» «պարգեւեալ յԱստուծոյ» «այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատու իմաստութեամբն Աստուծոյ» *(Կորյուն, Վարք Մաշտոցի, [ԺԴ], Երեւան, 1941, էջ 62)*.

Խորենացին սակայն, Կորյունի մոտ կարդալով այս շռայլ գովեստները, դրանք բաց է թողել եւ աղվանից գրերի ստեղծման կապակցությամբ հիշատակում է միայն, որ Մեսրոպին օգնելու համար «Սյունիքի տեր երիտասարդ Վասակը» (մանուկ Վասակ) ուղարկեց շնորհալի թարգման Բենյամինին *(Մ. Խորենացի, Պատմութիւն, Գ, ԺԴ)*.

Գալով Խորենացու հակակրանքին դեպի Մամիկոնյանները՝ պետք է նշել, որ Խորենացու Պատմության մեջ Մամիկոնյանների նկատմամբ դրսեւորված որեւէ վերաբերմունք չի կարող դիտվել իբրեւ սյունեցի պատմիչի պարզունակ տոհմային թշնամանքի արտահայտություն: Հետազոտողները ուշադրություն չեն դարձրել այն փաստի վրա, որ Խորենացին, ըստ Գավազանագրքի, եղել է Բագրեւանդի եւ Արշարունյաց եպիսկոպոսը, իսկ Բագրեւանդ գավառը 439 թվականին՝ Սահակ Պարթեւ կաթողիկոսի մահից հետո, ժառանգաբար անցել էր նրա փեսա Համազասպ Մամիկոնյանի ժառանգներին,- ուրեմն Խորենացին Մամիկոնյան տոհմի ժառանգական կալվածքի եպիսկոպոսն էր 460-ական թվերից՝ հավանաբար հաջորդելով նշանավոր Եզնիկ Կողբացուն *(Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 523, հմմտ. էջ 56)*. Նշանակում է, նա առավել եւս չէր կարող թշնամի լինել Մամիկոնյան իշխաններին, առանց որոնց համաձայնության անհնար էր գրավել այդ նախարարական տան հոգեւոր առաջնորդի աթոռը:



*Շարունակությունը՝ էջ 6*

---

### <u>ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ</u>

# ԵԿԵՂԵՑԻ

*Սկիզբը՝ թիվ 11, 12*

## ՃԳՆԱՎՈՐ, ՔԱՀԱՆԱ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ

Միայնակյաց նշանակում է ոչ միայն միայնակ ապրող, այլեւ միայնակ աղոթող, որովհետեւ ճգնավորները, առանձին ապրելով, առանձին էլ աղոթում էին: Քրիստոսն ասաց. «Ուր երկու կամ երեք հոգի միաբանված լինեն Իմ անունով, ես այնտեղ եմ»: Երեքը վերաբերում է ընդհանրական աղոթքին, իսկ երկուսը՝ առանձնականին, որի ընթացքում միաբանվում են երկուսը, այսինքն՝ հոգին եւ մարմինը, որի շնորհիվ էլ միտքը կարողանում է մտնել աղոթական վիճակի մեջ: Հավանաբար շատերն են ձեզանից հարց տվել. «Մենք հիմա ապրում ենք քսանմեկերորդ դարում, ի՞նչ կարիք կա միջնադարյան ճգնավորների, վանականների կամ էլ թեկուզ կուսակրոն քահանաների»: Այսպիսի հարց տվողներն ուշադրությամբ չեն խորասուզվել այն աստվածային հայտնության մեջ, որը բովանդակում է Աստվածաշունչը: Ճգնավորները հենց միայն իրենց աղոթքներով մեծ օգուտ են տվել մարդկությանը, ինչպես որ ժամանակին Մովսես մարգարեն էր աղոթում,



եւ իսրայելացիների հաղթանակն ու պարտությունը կախված էին միմիայն նրա հենց աղոթքներից: Քրիստոսը Երկնքի արքայությունը նմանեցրեց կույսերի: Պողոս առաքյալը գովելի համարեց ամուսնությունը, սակայն հազարապատիկ ավելի գովելի՝ կուսության ողջախոհությունը: Եկեղեցու հայրերն ասում են, որ Երկնքի արքայության մեջ միմիայն կույսերն են արժանի համարվելու անկյալ հրեշտակների ամենաբարձր տեղին: Սակայն եթե մի կողմ դնենք ե՛ւ հայրերի ասածները, ե՛ւ նշված վկայությունները, ապա դարձյալ մնում է Հովհաննու Հայտնության մեջ նկարագրված ճշմարտությունը, ըստ որի՝ անմիջականորեն Քրիստոսի ներկայությունը հավիտյանս վայելելու են այդ մեծ առաքինությունն ունեցողները: Հավանաբար հետաքրքիր կլինի իմանալ ճգնավորի կամ հասարակ վանականի եւ քահանայի տարբերությունը: Եկեղեցում աղոթքի ժամանակ վանականը կանգնում է ձեռնադրված քահանայից հետո, որովհետեւ չնայած մեծ ողջախոհությամբ է ապրում, սակայն չունի մեղքեր կապելու եւ արձակելու, մկրտելու, պատարագելու աստվածապարգեւ իշխանությունը: Տարբերություն կա նաեւ հագուստների մեջ: Քահանան սքեմ է հագնում, իսկ վանականը կամ ճգնավորը՝ հաճախ միայն պատմուճան, որն անպայման պետք է գոտի ունենա: Այդ գոտին խորհրդանշում է մարմնական եւ ընդհանրապես ստոր ցանկությունների ու կրքերի զսպումը: Քահանաները կարող են պատարագի ժամանակ բեմ բարձրանալ եւ իրենց ձեռքով հաղորդություն ստանալ առանց պատարագիչ քահանայի միջնորդության, իսկ վանականները հաղորդություն ստանում են միայն քահանայի ձեռքից: Անշուշտ, բոլորդ էլ հիմնականում ականատես եք եղել թաղման արարողության: Հնում հանգուցյալին գերեզման տանելուց առաջ որոշ ժամանակով դնում էին եկեղեցում, քահանան կատարում էր նաեւ եկեղեցու կարգը, որից հետո հանգուցյալին տանում էին գերեզմանատուն: Սակայն հստակ տարբերություն կա, թե եկեղեցու որ մասում պետք է դրվի օծյալ հոգեւորականի, վանականի եւ աշխարհական մեկի աճյունը: Հոգեւորականները դրվում են խորանին մոտ, վանականները՝ խորանից քիչ հեռու, իսկ աշխարհականները՝ ավելի մոտ եկեղեցու դռանը: Սա պայմանավորված է ոչ թե հավատի, այլ առաջին հերթին Աստծուց ստացած իշխանության եւ Աստծո հանդեպ պատասխանատվության չափով: Քահանան Աստծո առջեւ պիտի պատասխան տա իրեն հանձնված ողջ ժողովրդի համար: Այդ իսկ պատճառով էլ իր այս պատասխանատու սպասավորության մեջ քահանան մեծ անհրաժեշտությունն ունի հավատացյալ ժողովրդի աղոթքների եւ աջակցության:

*Շարունակելի*

**Տ. Աղամ քհն. ՄԱԿԱՐՅԱՆ**

# ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

*Սկիզբը՝ թիվ 11-14*

Նարեկացու ապրած ժամանակը քաղաքական առումով թեեւ խաղաղ էր, բայց քաղաքական անհնազանդության մեջ էր պաշտոնական Եկեղեցու դեմ ուղղված մի ամբողջ շարժում, որ Թոնդրակյան անունն էր կրում: Կար բացահայտ պայքար, որին չէր կարող մասնակից լինել սրբակրոն վանական հայրը: Սակայն Նարեկացու դեպքում այդ պայքարն ինքն իր մեջ էր, ինքն իր դեմ էր, Մարդու անլիարժեքության դեմ, որ հասնում էր վերջնական ինքնաժխտումի, ինքնամերժումի, անգամ ինքն իրեն հանդերձյալ աշխարհ ուղարկելու գաղափարի: Պայքարը դարի ոգին էր, եւ Նարեկացին այդ ոգու կրողն էր: Նարեկացին ձգտում էր Աստծուն նաեւ այն նպատակով, որպեսզի վերջ գտնի չարությունը, փակվի մեղքի աղբյուրը, որ խոտորում է մարդուն ճշմարիտ ճանապարհից: Նարեկացու ողբերգությունը ձգտելու եւ չհասնելու մեջ է, ինչով էլ արտահայտվում է նրա ներքին պայքարը եւ բնականորեն ունի երկու հակադիր եզր՝ ժխտում կամ բացասում եւ հաստատում կամ փառաբանություն: Նարեկացու անննանցորդ հավատի նպատակների նպատակը Աստվածն է: Աստվածն ըստ Նարեկացու եւս մի կատարյալ Էություն է, որ Իր մեջ ունի մարդկային ամեն ինչ, բացի մեղքից: Աստված նաեւ ամենակարող է ու հավերժական, որի առջեւ մարդկային բոլոր սերունդների անցած ու անցնելիք ճանապարհն է: Նարեկացին հանդես է գալիս որպես այդ սերունդների ձայնի խտացում, ոգու մարմնացում, որ բոլորի անունից խոսում է բոլորի Աստծու հետ:

Աստծու, կատարյալի ձգտումն ավելի ուժգնանում է այն ժամանակ, երբ մարդու գոյությանը վտանգ է սպառնում, երբ մարդը կանգնած է անհուսալի կացության առջեւ, երբ մարդը վերջնականապես զգում է իր պակասավոր անկատարությունը, անլիարժեքությունը:



Շրջապատն անկատար էր: Թոնդրակեցիները ժխտում էին Եկեղեցին, ոչնչացնում ու բովանդակազրկում շուրջ 700 տարի շարունակ ամրապնդված, հաստատված կրոնական պատկերացումները: Հակառակ այդ ամենի՝ հոգու ճգնաժամի այդ կացության մեջ Նարեկացին միտվել է դեպի Բարձրագույնը՝ փորձելով հնարավորին չափ ամբողջական ու մերձավոր տեսնել Կատարյալ ոգուն, որ է Աստված:

Նարեկացու համար ելակետը մարդն է՝ ինքը, իր նմանը, նպատակը՝ Աստված, Միակը, Բարձրյալը: Մարդը քննելի է, կասկածների ենթակա, հավատից դուրս, Աստված՝ անքննելի, ամբողջական հավատ:

Մարդու ամբողջական կերպարը Նարեկացու երազանքն է: Մարդը, որն ըստ նրա, ստեղծվել է Աստծու կերպարանքով, երբեմն նաեւ տարակույս է հարուցում. «... ու չգիտեմ երբեք, Թե որի՞ ձեռքով եւ ո՞ւմ պատկերով, ինչո՞ւ գոյացա» (ԽԶ, ա): Հաջորդում է մարդու պատկերումը, որը հրեշտակի ձեւով է ստեղծվել- կառուցվել՝ կանգնած է ոտքերի վրա, ունի բազուկներ, որոնցով պիտի երկինք թռչի եւ դիտի «հայրենի աշխարհը բարձրից»: Բայց նա իր կամքով կորացավ գետնին. «Եվ միշտ աշխարհի չնչին ու ճղճիմ հոգսերով տարված՝ Անապատական ցիռերի կարգը դասեցիր դու քեզ»: Նրա մարմնի աշտանակի վրա բազմականթեղյա ճրագ հիշեցնող գլուխն է, «Որպեսզի այդպիսով, չհեռանալով օրինակների լույսի շնորհից, Տեսնես Աստծուն եւ անանցելիքն իմաստավորես»: Բանականությունը ճոխացնում է նրան կրկնակի ձիրքով՝ դարձնելով ստեղծող ու կառուցող: Նարեկացին ուրվագծում է մարդու նյութեղեն շինվածքը երեք հարյուր վաթսուն հոդերով եւ հինգ զգայարաններով (որոնց գումարը հավասար է տարվա օրերին): Ըստ Նարեկացու՝ Եկեղեցու «միության խորհուրդը դարձյալ քեզանով է մեկնաբանվում». «Ուրեմն այսպիսով, ինչպես եւ բազում այլ անզուգական հրաշակերտությամբ ստեղծված՝ Աստծու հարազատ պատկերն ես դու...» (ԽԶ, գ): Եվ հիմա Նարեկացու ողբն այն բանի համար է, որ մարդը կորցրել է « այդ փառքը երկնավոր». «Ինչո՞ւ ինքդ քո ձեռքով փակեցիր երկինքը քեզ համար, Եվ վերելքի դուռը կողպեցիր քո առաջ, Ինչո՞ւ մեղքերի պատմուճանը հանած՝ նորից հագար այն անառակ վարքով, Ինչո՞ւ ննջեցիր ինքդ կամովին հավերժությունը անստվեր հույսի, Ինչո՞ւ զինվեցիր դու ինքդ քո դեմ հակառակվելով, ո՞վ ընդունարան խելագարության» (ԽԶ, գ): Այս ասելով հանդերձ՝ Նարեկացին մարդու համար դեռեւս Աստծուն հուսալու եւ իր կորցրած պատկերը վերագտնելու հույս է փայփայում. «... պաղտիր՛ առ նա»:

Հիմա, ինչպես են իրար մերձենում միստիցիզմի գաղտնախորհուրդ ու գաղտնածես գաղափարները եւ Մարդ-Աստծու փիլիսոփայությունը: Սա այն հակադրամիասնությունն է, ինչը բնորոշ է Նարեկացու ամբողջ աշխարհընկալմանը թե՛ որպես խոսքի բովանդակություն, թե՛ որպես խոսքի արտահայտման ձեւ: Նարեկացին իր մեջ համատեղում է այդ երկու եզրերը՝ ներքին վիթխարի լարումի գնով:

Ի՛նձ լսիր, Տե՛ր, - դիմում է Նարեկացին եւ պատմում-ներկայացնում է իր զգացմունքների հեղեղը: Այո՛, պատմում-ներկայացնում: Պատմվող-ներկայացվող զգացմունք կամ այլ կերպ՝ պատմվող-ներկայացվող քնարերգություն, որը սյուժե չունի, բայց ունի խոսքի զգացական զարգացման որոշակի ընթացք: Քնարական ապրումը Նարեկացին դարձնում է պատմվող-ներկայացվող մենախոսություն: Դա ավելին է, քան դեպքերի, գործողությունների ու հերոսների միջոցով ծավալվող մի պատմողական ստեղծագործություն՝ լինի առասպել թե առակ, վիպական մեծ թե փոքր երկ: Այդ ապրում-մենախոսությունն իր մեջ ի սկզբանե ունի այդ դեպք-գործողություն-հերոս շարքի բոլոր ազդակները, բոլոր նախադրյալները եւ հիմա ի հայտ է գալիս որպես գեղարվեստական քնարական ձեւի մեջ դրված խոհով ու զգացմունքով ամրացած ոգու իմաստասիրություն:

Գաղտնատես Աստծու առջեւ Նարեկացին անում է իր «կորուսյալ հոգու վերստին գյուտը»: Բայց նա կանգնած է հատուցման դատաստանի առջեւ որպես «մահվան գերի», որովհետեւ կատարել է «բազմապիսի մեղանչումներ»: Սկսվում է մեծ պայքարի, ընդդիմության ու հաշտության արարողությունը.

*Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանին*
*հատուցման,*
*Ուժգին հնչեցեալ ի ծորն վրէժխնդրութեան,*
*Կրկին ինձ երկնէ մարտից հարցմունս՝*
*Այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց*
*ներհակականաց,*
*Ուր հիմունս անձին ցուցանի*
*Խռովութիւն ամբոխից՝*
*Հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր...*
*(Բան Ա, բ)*

Հաջորդում է իր կերպարի բացահայտումը: Եվ քանի որ բարձրյալ Աստվածը «գործերով է գրավվում միայն եւ չի կաշառվում բանաստեղծությամբ», իրեն՝ որպես հանցավոր, ներկայացնում է համապատասխան օրինակներով. իբրեւ պատժակից քանդված Սոդոմին, իբրեւ Նինվեի պապանձված դատախազ... Եվ որպեսզի ի կատար ածի ինքնախարազանման այս հանդեսը, որով պիտի անընդհատ մարդու վրայի ժանգը քերեր, որպեսզի հասներ ոսկե միջուկին, այսպես է դիմում Գերագույնին.

*Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝*
*Իբր ապաշան սերմանող անբերրի երկրի:*
*Մի՛ եղեց ինձ երկնել եւ ոչ ծնանել,*
*Ողբալ եւ ոչ արտասուել,*
*Խորհել եւ ոչ հառաչել,*
*Ամպել եւ ոչ անձրեւել,*
*Ընթանալ եւ ոչ հասանել,*
*Ինձ ձայնել եւ քեզ ոչ լսել,*
*Պաղատել եւ անտես մնալ,*
*Կոդկոդել եւ ոչ ողորմել,*
*Աղաչել եւ ոչ ինչ ագտել,*
*Զոհել եւ ոչ ինչ ճենճերել,,*
*Զքեզ տեսանել եւ դատարկ ելանել (Բ, գ):*

*Շարունակությունը՝ էջ 6*



# ՀՈՎՀԱՆ Գ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՁՆԵՑՈՒ
## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ թիվ 14*

Դառնալով Օձնեցուն վերագրվող շարականների 4 կանոններին եւ ուսումնասիրելով շարականների հեղինակների բոլոր հայտնի ցուցակները՝ առաջին հայացքից թվում է, թե հարցը բավականին պարզ է, քանի որ դրանցից գրեթե բոլորում միանշանակ կերպով այդ կանոնների հեղինակը Օձնեցին է համարվում: Սակայն 13-րդ դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր Պատմության՝ Շնորհալուն վերաբերող մասում նրան է ընծայում խնդրո առարկա կանոններից վերջինի՝ Որոտման կանոնի *Օրհնությունը*, ինչպես նաեւ Ս. Պետրոսի ու Պողոսի կանոնի *Օրհնությունը*, *Մանկունքն* ու *Համբարձին*. Ուշագրավ է, որ Գանձակեցին իր գրքի այն մասում, ուր պատմում է Օձնեցու մասին, որեւէ ակնարկ չի անում այս մասին՝ ուղղակիորեն բոլոր 4 կանոններն ամբողջությամբ համարելով Օձնեցունը: Սակայն իր «Բացատրութիւն շարականաց» հիմնարար աշխատության մեջ հայր Գաբրիել Ավետիքյանը նույնպես վերը նշված նմուշները համարում է Շնորհալունը՝ հղելով Գանձակեցուն: Նրա օրինակին է հետեւում նաեւ մերօրյա երաժշտագետ Ն. Թահմիզյանը, որը Ներսես Շնորհալուն նվիրված իր աշխատության մեջ խնդրո առարկա միավորները վերագրում է Շնորհալուն՝ առանց վկայակոչելու որեւէ սկզբնաղբյուր՝ հավանաբար ի մտի ունենալով վերը նշված աղբյուրները: Խնդրո առարկա նմուշների երաժշտական բաղադրիչների ոճական նկատելի տարբերություններից դատելով՝ Օձնեցու այլ շարականների համեմատությամբ, չի բացառվում դրանց՝ Շնորհալու գրչին պատկանելը: Մյուս կողմից էլ, օրինակ, Որոտման որդիների կանոնի վերջին նմուշը՝ *Մանկունքը*, իր երաժշտական բաղադրիչով գրեթե նույնությամբ կրկնում է Շնորհալու՝ Հովհան Ոսկեբերանին նվիրված *Մանկունքի* մեղեդին, տարբեր են միայն սրանց տեքստերը: Այսուհանդերձ, այն համարվում է Հովհան Օձնեցունը, եւ սա հենց այն դեպքն է, երբ Շնորհալին խմբագրելու փոխարեն ուղղակի վերաեղանակավորել է շարականի մեղեդին: Բացի այս 4 կանոններից, որոշ աղբյուրներում առանձին եւ հատուկ կերպով նշված է Օձնեցու «Մեղաք յամենայնի» նմուշը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Դավիթ մարգարեի եւ Հակոբ առաքյալի կանոնի երկրորդ միավորը՝ *Հարցը*, որն այսպիսով կարեւորվում է որպես հեղինակին լավագույնս բնութագրող ստեղծագործություն: Եվ վերջապես, միջնադարյան որոշ ցուցակներում էլ Օձնեցուն է վերագրվում 7-րդ դ. հայ կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու՝ «Անսկիզբն բանն Աստուած» *Համբարձին*, որն ըստ Թահմիզյանի՝ Դավիթ մարգարեի կանոնի «Անսկիզբն Աստուած» *Ողորմյայի* սկզբնաբառերի նմանության հետեւանքով ծագած թյուրիմացության արդյունք է սոսկ: Սակայն մեկ այլ շարականագետ՝ Խ. Պալյանը, «Էջմիածին» ամսագրում զետեղված իր հոդվածում (նվիրված Օձնեցուն) անհավանական չի համարում, որ շարականի հեղինակը կարող էր Հովհան Օձնեցին լինել: Անշուշտ, այս ամենը դեռեւս քննելի է թե՛ բանասիրական, թե՛ երաժշտագիտական տեսանկյունից:

Ամեն դեպքում նշելի է, որ դեռեւս 1959 թ. Հ. Անասյանի հրատարակած ստվարածավալ եւ մանրակրկիտ «Հայկական մատենագրության» (Ա հատոր) մեջ, Շարականների հեղինակների երեք խմբագրություններում, ինչպես նաեւ նրանց նվիրված երկու չափածո ցուցակներում Ավագ կամ Մեծ տոների 4 կանոններն ամբողջությամբ վերագրվում են Հովհան Օձնեցուն: Եթե հաշվի առնենք նաեւ սրանց *Հարցերին* կից *Գործատուները* որպես առանձին միավորներ, ստացվում է 28 նմուշ, որոնք շատ բազմազան են իրենց բնույթով: Սրանք պարունակում են ինչպես հնագույն վանկային, այնպես էլ ավելի զարգացած՝ ծորերգային հորինվածքով երգեր, ինչպես նաեւ ստեղի տիպի ծանր ընթացքով ճոխ նմուշներ: Օձնեցու նախասիրած ձայնեղանակները երրորդ ու չորրորդ ձայն եւ կողմ եղանակներն են՝ իրենց յուրօրինակ դարձվածներով հանդերձ:



*Շարունակությունը՝ էջ 6*

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ

Աշխարհի առաջադեմ մարդիկ, լուսամիտ անհատները սկզբից եւեթ դատապարտել են թուրքերի վայրագությունները, բայց դա, ցավոք, չի կրել պետական ու միջազգային ճանաչման բնույթ: Ավելին. մինչեւ 1960-ական թթ. կեսերը՝ այսինքն՝ Եղեռնի 50-ամյակը, խորհրդային պետությունը, որ 1921-23 թթ. առանց Հայաստանի մասնակցության կայացած թուրք-բոլշեւիկյան համաձայնագրերով ողջ Արեւմտյան Հայաստանն ու Արեւելյան Հայաստանի մի զգալի մասը նվիրաբերեց Թուրքիային, իսկ Նախիջեւանն ու Արցախը՝ նոր-նոր ձեւավորված Ադրբեջանին, նույնիսկ Հայաստանի հայությունից էր հետեւողականորեն թաքցնում նրա մոտիկ անցյալի մեծ ողբերգությունը, անգամ խստորեն արգելում էր միլիոնավոր անմեղ նահատակների մասին հիշեցումներն ու հայության կորցրած պատմական հայրենիքի՝ Արեւմտյան Հայաստանի խնդրի արծարծումները: Միջազգային հանրությունը, մեծ տերությունները երկար ժամանակ չէին ճանաչում ու դատապարտում Օսմանյան կայսրության մեջ թուրքերի կողմից հայերի՝ պետականորեն կազմակերպված սպանդը՝ որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն եւ մարդկության դեմ իրականացված ծանրագույն հանցագործություն: Այդ նախադեպը չդատապարտելու եւ մոռացության մատնելու հետեւանքով հորդեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, եւ ֆաշիստները, դաժանության ու վայրագության գծով իրենց նախահայր թուրքերի օրինակով, իրենց անպատժելիությանը վստահ՝ իրականացրին հրեաների հոլոքոստն ու տասնյակ միլիոնավոր մարդկանց ոչնչացումը:

Թուրքերի պարագայում, սակայն, առայսօր չի կայացել Նյուրնբերգյան դատավարություն, Հայոց Մեծ Եղեռնը դեռեւս միջազգայնորեն չի ճանաչվել, հանցագործ Թուրքիան չի կանգնել մարդկության ու պատմության դատաստանի առջեւ, ու հենց այդ պատճառով էլ, օգտվելով իր համար նպաստավոր վիճակից, ոճրագործն առայժմ սառնասիրտ ցինիզմով ուրանում է իր հանցանքը. ո՛չ դատապարտում կա, ո՛չ էլ զղջում ու հատուցում:

Ցեղասպանություն-Եղեռնը՝ իր պատճառահետեւանքային առնչությունների ողջ համակարգով, միլիոնավոր հայերի՝ իրենց բնօրրան պատմական հայրենիքում բնաջնջելու կամ արտաքսելու եւ սիրիական անապատներում հատուկ ծրագրով աննախադեպ դաժանությամբ ոչնչացնելու, հայերի պատմական հայրենիքը բռնազավթելու ողբերգական իրողությունը, անշուշտ, վկայված է ականատեսների հիշողություններում, տարբեր երկրների դիվանագիտական աշխատողների զեկույցներում ու լուսանկարներում, պատմագիտական ուսումնասիրություններում, գեղարվեստական պատումներում ու շարժանկարներում: Այս ամենի մեջ ու բոլորի հետ միասին առանձնահատուկ կարեւորություն է ձեռք բերում ցեղասպանությունը համայն աշխարհի մարդկությանը ծանոթացնելու եւ դատապարտելու նպատակադրումով գրված Շիրազյան այս պոեմը, որը հեղինակն ինքն անվանում է ողբամռունչ դատաստանամատյան:



Մեծ տերություններն առաջնորդվում են միայն իրենց քաղաքական ու տնտեսական շահերով. վկա՝ ամերիկյան, անգլիական պաշտոնյաների ու քաղաքագետների վերջին հայտարարությունները: Այդ ինչի՞ց է, որ Թուրքիայի ու Ադրբեջանի ոճրագործություններն ու բռնազավթումներն արդարացվում են, իսկ Ադրբեջանի սանձազերծած պատերազմին հայերի հակադրած ազգային ազատագրական պատերազմով փրկված, բռնատիրական լուծը թոթափած Արցախի ինքնուրույնությունը չեն ճանաչում:

Ո՛չ Մեծ Եղեռնի, ո՛չ էլ արցախյան ազատամարտի մասին միջազգային հանրությունը բավարար չափով իրազեկված չէ, ավելին՝ ապակողմնորոշված է: Այդ պատճառով էլ լրատվական պատերազմում մենք հաճախ տանուլ ենք տալիս: Օրինակներ՝ որքան ուզեք: Հենց վերջերս Հալեպում հնարավոր եղավ դիտել «Ալ Ջեզիրե» հեռուստակայանի հաղորդումը Ադրբեջան-Հայաստան հակամարտության մասին, ուր «չեզոք» լրատվության խոստումով ադրբեջանցի գաղթականների թիվը ուռճացվելով բազմապատկվեց, ներկայացվեց ավելի քան մեկ միլիոն, իսկ իրականում ավելի քան 500 հազար հայ գաղթականների թիվը, միտումնավոր նվազեցվելով, իջեցվեց ընդամենը 70 հազարի:

Մեր խորին համոզմամբ՝ մի կարեւոր հարցում մենք թերանում ենք. թուրքական հակահայ քարոզչությանը, նրա իսկ գործած եղեռնի անամոթ ուրացումներին արժանի հակահարված չենք տալիս ու վայելում ենք մեր անտարբերության պտուղները. հույսներս դրել ենք բանականության, խղճի, անհերքելի թվացող պատմական ակնհայտ փաստերի ճանաչման եւ աշխարհի կողմից ընդունման վրա ու չենք օգտագործել ռազմավարական այն զորավոր զենքը, որ չունի եւ չէր էլ կարող ունենալ մեր հակառակորդը. դա հայոց եղեռնապատումի հուշագրական-վավերական ու գեղարվեստական գրականությունն է եւ մանավանդ Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը, մի դատաստանամատյան, որի հիմքը նույն այդ ողբերգությունն է՝ իր պատմաիրավական, աշխարհաքաղաքական, ազգագրական, մարդաբանական, հոգեբանական ու հայոց պահանջատիրության բոլոր հիմնավորումներով: Մոռանում ենք, որ արվեստը, պատկերավոր խոսքը երբեմն շատ ավելի ներգործուն միջոց է, քան նույնիսկ փաստն ինքը եւ գիտական ծանրակշիռ խոսքը: Ինչո՞ւ Ֆրանց Վերֆելի 1934 թ. գրած «Մուսա լեռան քառասուն օրը» պատմավավերական վեպը աշխարհի բազմաթիվ լեզուներով հրատարակվելուց հետո միայն 1964 թ. թարգմանվեց ու տպագրվեց Խորհրդային Հայաստանում, որովհետեւ կային խորհրդային կայսերապետության՝ Թուրքիայի հետ ունեցած քաղաքական շահեր:

*Շարունակությունը՝ էջ 7*



*Սկիզբը՝ էջ 4*

# ՀՈՎՀԱՆ Գ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՁՆԵՑՈՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին կանոնը՝ նվիրված Դավիթ մարգարեին եւ Հակոբ առաքյալին, բաղկացած է 5 երգից եւ ամբողջովին ընթանում է ԴՁ-ում: Կարելի է ենթադրել, որ սա Օձնեցու առաջին ստեղծագործությունն է, որը հավանաբար ստեղծվել է դեռեւս երիտասարդ տարիքում: Հայր Գ. Ավետիքյանն իր վերը նշված գրքում «խակակութ» պահեր է նկատում եւ նույնիսկ Օձնեցու գրչին վայել չի համարում սրա տեքստի որոշ հատվածներ: Թերեւս արգո գիտնականը պատշաճ ուշադրության չի արժանացրել շարականի երաժշտական բաղադրիչը, քանզի վստահորեն կարելի է պնդել, որ այն ստեղծված է միջնադարյան շարականերգության լավագույն չափանիշներով: Ինչ վերաբերում է սրա տեքստին, ապա այն Աստվածաշնչի Հին Կտակարանի երկու սիրված կերպարների համադրումն է մեկ կանոնում եւ իր բովանդակությամբ բացահայտում է վերնագրի իմաստը: Դավիթ մարգարեն եւ Հակոբ առաքյալն ամփոփված են միեւնույն հարասության մեջ, քանզի Հիսուսը Դավթի ցեղից էր սերում, իսկ Հակոբը վերջինիս տյառնեղբայրն էր, ինչպես նշվում է *Օրհնության* (Յաղթող գտաւ) առաջին պատկերի վերջին տան մեջ: Այն կազմված է երկու պատկերից, որոնցից առաջինի երեք տները ներածական բնույթ ունեն, սակայն տարբեր եղեւէջներ (սովորաբար դրանք ունենում են միեւնույն մեղեդին), իսկ երկրորդ պատկերը հակադրվում է առաջինին իր խրոխտ ու վճռական տրամադրությամբ: Այս կանոնի *Հարցին* վերն արդեն անդրադարձել ենք, հավելենք միայն, որ բովանդակությամբ այն առավել նման է *Ողորմյայի*, իսկ մեղեդին վերջնահանգաձեւում ավելի է ընդգծում սրա խնդրվածքային բնույթը:

Այս կանոնում առանձնահատուկ նշանակություն ունի «Օրհնեցէք զտէր յօրհնութիւն» *Մանկունքը*, քանի որ ներկայումս այն համարվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հիմնը:

Հովհան Օձնեցու ստեղծած շարականների երկրորդ կանոնը Ս. Ստեփանոս նախավկային նվիրված կանոնն է եւ բաղկացած է 7 երգից: *Օրհնությունը* ներառում է երեք պատկեր, որոնցից առաջինը՝ «Նահատակ բարի» սկզբնաբառերով, համարվում է հեղինակի ստեղծագործական ժառանգության գոհարը: Այն ունի ԳԿ ձայնեղանակային նշումը, սակայն վերը նշված երկու բառերին համապատասխանող մեղեդին է միայն ընթանում ԳԿ-ում, իսկ շարականն ամբողջովին շեղվում է դեպի ԳԿ դարձված՝ հաղորդելով ծանր ճարտարահյուս այս երգին արեւելյան հոգեպարար արտահայտչականություն: Քանի որ Ս. Ստեփանոս նախավկան Հիսուսից հետո իր հավատքի համար նահատակված առաջին մարտիրոսն է եղել, նրա հիշատակը Օձնեցին հավերժացնում է շքեղ շարականների մի գունագեղ շարքով: Օրինակ, սրա «ընդ երկնային հոգեղինաց» *Հարցն* էլ ընթանում է ԳՁ դարձված եղանակում, չնայած որ ունի ԳՁ նշումը: Եթե այս երգի առաջին երեք տներում միահյուսված են վերոնշյալ ձայնեղանակների հատկանիշները, ապա *Գործատունն* արդեն ամբողջովին բացահայտում է ԳՁ դարձվածի ոլորտը: Նշանակալից են նաեւ կանոնիս *Մանկունքն* ու *Ճաշուն*, որոնք ի տարբերություն այլ մեղեդիների՝ պահպանել են իրենց անպաճույճ, հնաբույր ոճը:

Հովհան Օձնեցու հաջորդ երկու կանոնների շարականների հանգամանալից քննությունը թողնելով մեկ այլ պատեհ առիթի՝ նշենք միայն, որ Կիրակոս Գանձակեցու ակնարկած առանձնահատուկ ոճը, որով նա բնութագրում է Ներսես Շնորհալու (Կլայեցու) երաժշտական եղանակները (*Ոճ խոստովային՝ է որպէս կատարեալ եղանակ երաժշտութեան*), ամենայն հավանականությամբ սկիզբ է առնում նաեւ Օձնեցու շարականներից: Անկախ *խոստովային* բառի տարբեր ստուգաբանություններից, այն հայոց հիմնական խազանշաններից մեկի անվանումն է, որ հետագայում դարձել է նաեւ Նոր հայկական ձայնագրության *սոլ* ձայնանիշի անունն ու համապատասխան նշանը: Եվ հենց այս ոճի զարգացումն ու ճոխացումն է, որ հայկական հոգեւոր երաժշտությունը դարձնում է այնքան գրավիչ ու տպավորիչ, որ մեր շարականների լավագույն նմուշները գեթ մեկ անգամ ունկնդրողը, եթե անգամ օտարազգի է, ու նրան հասու չէ նույնիսկ տվյալ երգի տեքստի իմաստը, կարող է այնպիսի խորունկ ապրումներ ունենալ, որպիսին երբեւէ չէր ունեցել: Իսկ նրանք, ում հասու է նաեւ մեր հոգեւոր երգեցողության բանաստեղծական իմաստը, առավել եւս կարող են ըմբոշխնել դրանց բացառիկ արտահայտչականությունն ու վեհությունը: Այդ արձակ կամ չափածո տեքստերը հիմնականում Աստվածաշնչի Հին եւ Նոր Կտակարանների թեմաներով հարասություններ են, որոնց միջոցով շարականների հեղինակները ձգտել են հաղորդակից դարձնել ժողովրդական լայն զանգվածներին Սուրբ Գրքի բովանդակության կարեւորագույն դրվագներին: Հովհան Օձնեցու երաժշտական ժառանգությունը հայոց հոգեւոր երգարվեստում պատշաճ տեղ է գրավում ոսկեդարի եւ զարգացած միջնադարի միջեւ՝ կամրջելով դեռեւս Սահակ-Մեսրոպից եկող հնագույն երաժշտական ավանդույթներն իր հանճարեղ հաջորդների՝ Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Շնորհալու անզուգական արվեստին:

Միջնադարյան մեր անվանի մտածողներն ու օժտված երգահանները ջերմորեն հավատում էին, որ հոգեւոր սրբազան երաժշտությունն ի զորու է բուժել մարդու հոգին, իսկ դրա շնորհիվ նաեւ մարմինը, քանի որ վերջինիս ապաքինումն անմիջականորեն կախված է անձի հոգեվիճակից ու տրամադրությունից: (Թերեւս պատահական չէ, որ հայերենում «հոգի» բառը նշանակում է նաեւ «մարդ»): Հենց այս առումով էլ Հովհան Իմաստասեր Օձնեցուն կարելի է անվարան կերպով համարել հոգիների բժիշկ, որը գործում էր ո՛չ միայն իր հայրապետական գավազանով, այլեւ երաժշտական աստվածատուր ձիրքով՝ հօգուտ հայ ազգի հոգեմտավոր բարօրության, ի փառս Հայոց եկեղեցու ազգային նկարագրի:

***Արփի ՎԱՐԴՈՒՄՅԱՆ***
*Երաժշտագետ*

# ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԹՎԻ ԵՎ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## Մովսեսը սյունեցի՞

Սկիզբը՝ էջ 3

Խորենացու պես լրջմիտ պատմագրի եւ մտածողի ազգային-քաղաքական միտումները տոհմային հակակրանքով ու համակրանքով բացատրելը մի անգամ չէ, որ հասցրել է կամայական հետեւությունների: Ոմանք ասում են՝ քանի որ Խորենացին ատում է Մամիկոնյաններին, ուրեմն սյունեցի է: Ոմանք էլ, ինչպես դարասկզբին Յ. Մարկվարտը, իսկ վերջին տարիներս Կ. Թումանովը եւ Ռ. Թոմսոնը, նույն կետից մեկնելով, ավելի հեռուն են միտում. քանի որ Խորենացին ատում է Մամիկոնյաններին եւ փառաբանում Բագրատունի իշխաններին, ապա նա Բագրատունյաց տոհմի գաղափարախոսն է եւ ապրել է 8-9-րդ դարերում՝ այդ երկու տոհմերի հակամարտության շրջանում: Եվ ուրեմն, Խորենացին կեղծարար է, երբ հայտարարում է, թե եղել է Սահակի ու Մեսրոպի աշակերտը:

4-րդ դարի պատմական անցքերի մեջ Մամիկոնյանների ունեցած մասնակցության վերագնահատումը Խորենացու կողմից պետք է բացատրել ավելի հիմնավոր պատճառով, քան նրա ենթադրյալ տոհմային ծագումն է: Դրանում արտահայտվել է ավելի շուտ եւ ավելի շատ Պատմահոր քննական վերաբերմունքը Փավստոս Բուզանդի նկատմամբ, որը բացարձակացրել է Մամիկոնյանների գործունեությունը՝ նրանց համապատիվ դասելով թագավորող Արշակունիների եւ Լուսավորչի տան հետ, որով տեղի-անտեղի նսեմացվել են մյուս նախարարների առաքինի գործերը: Այդ քննադատության հետեւանքն է, մեր կարծիքով, որ Խորենացին զուսպ վերաբերմունք է դրսեւորել դեպի Մամկոնյան տոհմը, թեեւ այսօր դժվար է ասել, թե արդյո՞ք Խորենացին Մամիկոնյանների առաքինի գործերից պակասեցրել է ճիշտ այնքան, որքան ավելացրել է Փավստոսը:

Առհասարակ մեր միջնադարյան պատմությունը քննելիս՝ որոշ հետազոտողներ թե՛ 451 թվականից նույնիսկ շատ առաջ եւ թե՛ այդ թվականից հետո տեղի ունեցած անցքերը հաճախ վերիմաստավորում են՝ անընդհատ մտքում ունենալով Վասակ Սյունու եւ Վարդան Մամիկոնյանի հակամարտությունը եւ այն հանգեցնում են սոսկ Սյունյաց եւ Մամիկոնյան նախարարների ու նրանց կողմնակիցների տոհմային թշնամանքին՝ մոռանալով, որ Վասակյանց եւ Վարդանանց հակամարտությունն ամենից առաջ քաղաքական բնույթ ուներ: Դա պետական իշխանության եւ ազգային մտածողության ներհակությունն էր, պետական եւ ազգային շահերի հակադրումը, որ ավելի կամ պակաս չափով դրսեւորվել է հայ ժողովրդի պատմության տարբեր փուլերում եւ քիչ աղետներ չի բերել նաեւ մեր ժամանակներում, ու դեռ կբերի, քանի դեռ մեր ժողովրդի պետական եւ ազգային գործիչները չեն հաղթահարել այդ շահերի հակադրման միտումները: Որեւէ ազգի համար կործանաբեր է ինչպես պետականության բացակայությունը, այնպես էլ այն, երբ պետական սկզբունքը վեր է դասվում ազգայինից, իշխելու տենչը՝ ազգային ձգտումներից:

Հոմերոսի ծննդավայրը կոչվելու պատվի համար անտիկ աշխարհում վիճում էին յոթ քաղաքներ՝ Աթենք, Զմյուռնիա, Քիոս, Կոլոփոն, Սալամին, Հռոդոս, Արգոս: Այնպես որ, մեծ բան չէ, երբ մեր Պատմահոր համար երկու-երեք գյուղեր են վիճում: Բայց խնդիրն այլ է այս պարագայում: 18-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփաներից մեկն ասել է՝ ճշմարտությունն ի հայտ է գալիս այն բանից հետո, երբ թույլ են տրված բոլոր հնարավոր սխալները:

Ես անձամբ մեծապես հարգում եմ ավանդական կարծիքը, որը պահպանվել եւ մեզ է հասել երկար դարերի միջով: Դա, իհարկե, չի նշանակում, որ ավանդական կարծիքը չի կարող վերանայվել,- կարող է, անշուշտ, բայց միայն գիտական լուրջ հիմքերի եւ լրջմիտ քննության առկայությամբ: Մինչդեռ Մովսես Խորենացու դեպքում մենք գործ ունենք մի տխուր իրողության հետ՝ Խորենացու ծննդավայրը պատմական Տարոնից Այրարատ, Ջավախք կամ Սյունիք տեղափոխելը, վերջին մեկ ու կես դարերում հայերիս վիճակված մեծ աղետի՝ գաղթականության եւ նրա ծնած մտայնության հետեւանք է պարզապես:



Եվ իրոք, տխուր տպավորություն է ստացվում. 1828-1830, 1877-1878, 1894-1896, 1915-1918 թվերի արեւմտահայության կրկնվող գաղթերից հետո, հետզհետե դեպի Արեւելյան Հայաստան սկսեցին գաղթեցնել նաեւ որոշ պատմական վայրերի անուններ եւ ինքնահոսով նաեւ ազգային պատմական գործիչների ծննդավայրերը: Դա ոչ այլ ինչ էր, քան մշակույթի կամավոր տարագրում ու վերաբնակեցում՝ իբրեւ շարունակություն հայ ժողովրդի կրկնվող բռնի տեղահանության, երբ բռնագաղթված ժողովրդի հավաքական հիշողությունն ավանդական հայրենիքի կարոտից ձգտում է իր շուրջը վերստեղծել անցյալ գոյության եւ բնակության պատմական միջավայրը:

Խնդիրն ունի նաեւ մի այլ կողմ: Վաղուց ի վեր թուրք պատմաբանները ջանում են ապացուցել, որ Արեւմտյան Հայաստանում երբեւէ հայություն գոյություն չի ունեցել. այնտեղ ապրել են միայն քրիստոնյա թուրքեր,- նրանց կարծիքով՝ քրիստոնյա թուրքեր էին տարոնացի Մեսրոպ Մաշտոցն ու Վարդան Մամիկոնյանը: Այսպես են լուծում նրանք հայոց մեծերի հարցը, որոնց հնարավոր չէ տեղահանել իրենց պատմական ծննդավայրերից: Եվ որքան շնորհակալ պիտի լինեն մեզ պատմության եւ մշակույթի թուրք կեղծարարները, երբ մենք ազատում ենք նրանց Մովսես Խորենացու նման համաշխարհային մեծության գլխացավանքից՝ կամայական եւ մտացածին ծննդավայրեր հորինելով նրա համար այսրկողմյան Հայաստանում, այսինքն՝ մեր ձեռքով անում ենք այն, ինչի համար նրանք պետք է երկար գլուխ կոտրեին:

Եվ ստացվում է, որ մենք մեր ձեռքով մեր ազգային մեծ երախտավորներին եւ նրանց հիշատակներն ենք գաղթեցնում մեր այս փոքրիկ Հայաստանը՝ փոխանակ հող տանելու, որ նրանց նվիրական անուններով վառ պահենք ժողովրդի հոգում կորսված Տարոնի ու Վասպուրականի, Մեծ Ծոփքի ու Փոքր Հայքի պատմական վայրերի հիշատակները:

Այս մտահոգությամբ էր ահա, որ նշանավոր ազգագրագետ եւ բանահավաք Գարեգին Սրվանձտյանն անցյալ դարի 60-ական թվերին գրում էր Մշո գավառի մասին. «Գետեր եւ վայրերը, որոնց կոչումն ու անունը մեկ-մեկ պատմություն են նախնյաց գործոց: Տաճարներու եւ բերդերու ավերակները, հին եկեղեցիները, որոնց մեջ նախնյաց անուն կամ հիշատակ, կամ նշան մը կը տեսնվի, մանավանդ այն մեծաշեն եւ հռչակավոր վանորայք, որ նախնի մշեցի հայոց աստվածպաշտության վկաներ ու վկայարաններ են: Այստեղ հայրենյաց պաշտպան մ' է պառկեր: Հոն՝ կրոնից մեծ պաշտոնյա մը եւ մարտիրոս մը: Թարգմանչաց շիրիմները Առաքելոց վանքն են: Մուշեղին եւ Վահանյաց դամբարանը Ս. Կարապետի մեջ: Սահակ Պարթեւ հայրապետը եւ Շուշանիկ՝ Աշտիշատու նեղ մատուռին մեջ: Հոս է Յրոնք, Տաղոնք, Օձ քաղաք, Վիշապ քաղաք, Խորոնք, Հացիկ, Մեղտի, Կվարս, Տոմ, Բարեխ, որ եւ Բաղլու, Մուշեղշեն եւ այլն, որոնց մեջեն փրկիչներ եւ լուսավորիչներ ելած են ազգիս: Ա՜հ, ո՞ր ազգի հայրենիքը այսչափ անմահ ու պանծալի հիշատակներ դեռ կենդանի ունի» *(Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հտ. 1, Երեւան, 1978, էջ 33)*:

Այսօր դժվար է գիտակցել, առավել եւս դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ թափառական քոչվորները ոչ թե քաջությամբ ու զենքով, այլ ոչխար արածեցնելու պատրվակով, այո՛, պարզապես ոչխար արածեցնելով՝ նվաճեցին մեր պատմական հայրենիքի մեծագույն մասը:

Մեծ հայրենասեր Մովսես Խորենացին գրել է. «Քաջերի սահմանն իրենց զենքն է», եւ քանի դեռ հայ ժողովուրդը զենքով կպաշտպանի իր սահմանները, այնքան ժամանակ Կոռնիձորն ու Արծվաշենը, Բերդաձորն ու Գետաշենը կմնան Խորենացու իրական, այլ ոչ թե պատմական հայրենիքը, ինչպես Տարոնն է:

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*





# Գրիգոր Նարեկացի

Սկիզբը՝ էջ 4

Նարեկացու համար սկզբից մինչեւ վերջ գերագույն երանություն է Տիրոջ բնութագրությունը, ինչը Բարձրյալի նկարագրի բազմակերպությամբ ծավալվում է հայերենի բառագանձի հարուստ հնարավորությունների բացահայտումով, ուր ճշգրիտ հատկանիշը ճշգրիտ մակդիր է, ճշգրիտ պատկերը՝ ճշգրիտ գաղափար: Տերը նրա համար «պարզեւատու է, ինքնաբուն բարի, բոլորին տիրող հավասարապես, միայն արարիչ դու ամեն ինչի. Փառավորյալ անքնին, ահեղ ահարկու, սոսկալի հզոր, Անպարագրելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի, Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշոշափելի, Անսկիզբ եւ անժամանակ, անշամանդաղ գիտություն...»: Այս «անշամանդաղ գիտություն»-ը նույն է, ինչ «զվարթ գիտություն»-ը, որ այս դեպքում Աստված է, ե՛ւ Աստծու պայծառությամբ Ճառագած Բանը:

Այսպես հորդում է խոսքը, որովհետեւ խոսքի առավելությունը Բարձրյալին է արժանի, որպես «խոստովանված լույս, անապական անձրեւ, անխարդախ ընթացք, անզուգական գութ, ողորմություն բազմազեղ, խոնարհություն տոնելի»: Բնորոշումներին հաջորդում է հականիշ իմաստների հակադրություն-համադրություններով մարմնավորվող մարդկային աշխարհը. «Որպեսզի խնդրանքներն այս բոլորի սրանով ընդմիշտ Քո մեծ գոյությանը ներկայացվեն» (Գ, բ):

Տարբեր առիթներով Նարեկացին նշում է, որ իր «Մատյան ...»-ը ոչ թե ինքնածին է, այլ ձեռնարկել է աստվածային «հոգու զորությամբ» (Գ, բ), ուստի «Բժշկի՛ր նրանց հոգիները դու եւ հանցանքները սրբի՛ր, Թո՛ղ պարտքերը նրանց եւ արձակի՛ր կապանքները մեղքի» (Գ, գ):

Խոսքին Նարեկացին հաղորդում է կենդանի շունչ, որը պիտի հոգին ու մարմինը բուժող զորություն ունենա: Նրա առջեւ կանգնում է աշխարհի պատկերը, եւ ինքը դառնում է իրական աշխարհի կենդանի խորհրդանիշ.

*Արդարութիւնն իմ նուազեալ եւ խպառ ունայնացեալ,*
*Մեղանքն յայտնեցեալ եւ յաւէտ առաւելեալ,*
*Չարիքն իմ մնացական, եւ ես՝ կորստական*
*Իրաւանցն կշիռ պակասեալ, եւ անիրաւութիւնն խիկոյն զաւրացեալ... (Դ, բ)*

Այս պահից արդեն խորանում է Աստծու եւ մեղապարտ մարդու հակադրությունը: Նարեկացու պես սուրբը աշխարհի մեղքն է խոստովանում. «Եվ արդ, ես որ մարդ եմ երկրածին՝ Անկայուն կյանքի երեւույթներով զբաղված, Եվ պատրող գինու հիմարությամբ արբած, Որ ստում եմ ամեն ինչով ու ոչ մի բանով ճիշտ չեմ խոսում, Վերոհիշյալ բոլոր ախտանիշներն իմ մեջ կրելով, Ես ի՞նչ երեսով հանդգնեմ կանգնել ատյանիդ առաջ, Ով արդարադատ, ահավոր անճառ, անպատում, հզոր Աստված բոլորի: Մեղանչած հոգուս ապերախտությունն համեմատելով երախտիքիդ հետ, Եվ հանիրավի գործերովը ես՝ հավետ պարտական: Դու ստեղծեցիր ինձ քո պանծալի պատկերի նման, Քո նմանությամբ օժանդակելով անուժ-տկարիս» (Ե, ա):

Նարեկացին խորացնում է մարդու մեղսական անուղղելիությունը: Խոստովանությունը եւ ներումը դեռեւս սահման չեն, որովհետեւ մարդը իր սխալի մեջ անուղղելի է. «Թեեւ խոստացա քեզ հաճոյանալ, բայց ուխտն իմ չպահեցի, Այլ նույն չարիքը նյութեցի դարձյալ՝ նախկին կենցաղիս վերադառնալով: Եվ կորստյանս խորխորատը ես իմ կամքո՛վ բացի» (Ե, գ), «Բայց ինձ ի՛նչ օգուտ՝ հյուսել այս խղճուկ խոսքերը մորմոք, չափաբերական, Երբ որ անցել է չափն իմ մեղքերի եւ անհնար է բուժումը նրանց» (Ե,դ):

Նարեկացին անընդհատ ինքնախարազանման նույն խոսքերն է ասում. «Իսկ իմ մեղքերն ու հանցանքները այնքան շատ են, որ հիշել չի լինի» (Զ,գ): Այս ամենով հանդերձ իր փրկության հույսը նա չի կորում. այդ հույսն է, որ մեղքերից ազատագրվելու ակնկալիքով նրան մղում է անընդհատ դատապարտելու իրեն: Իր մեղքը իրենն է, բայց իր մաքրագործման տարերքով նա իրեն «ներողներից» ոմանց ուժ է տալիս, որոնք կենդանանում եւ իրենց հերթին կորստյան են մատնում նրա հոգին:

*Շարունակելի*

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄՈՒՄ



*Սկիզբը՝ էջ 4*

Ինչո՞ւ Հովհ. Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմը բանաստեղծի կենդանության օրոք լույս չտեսավ եւ հետմահու տպագրվեց զգուշավոր խմբագրումներով ու կրճատումներով: Մինչդեռ հենց այս գործն էր պետք առաջնահերթ հրատարակել ու թարգմանել աշխարհի հնարավոր բոլոր լեզուներով ու դնել համաշխարհային ընթերցողի սեղանին: Եվ հենց առաջին հերթին թուրքերենով էր պետք թարգմանել, որովհետեւ այսօրվա թուրք պետական գործիչները իրենց նախորդների հակամարդկային արարքները արդարամտորեն արժեւորելու եւ դատապարտելու փոխարեն, խնդիրն իրենցից հեռացնելու համար, պատմական իրողությունների գնահատականը միայն պատմագետներին վստահելու կարգախոսներով խուսանավում են բուն ճշմարտությունից եւ թուրք ժողովրդից էլ են թաքցնում մեծ ոճրագործությունը: Ավելին, հետեւողականորեն հալածում են նաեւ այն հատուկենտ թուրք մտավորականներին, որոնք Եղեռնի իրողությունը ամբողջությամբ կամ մասնակի ընդունելու քաջությունն ունեն: Թաներ Աքչամին հենց վերջերս պետականորեն դատապարտելու օրինակը, թերեւս, ամենախոսուն փաստն է:

Ահա մի ուրիշ թուրք մտավորական՝ «Սիրտս քեզմով կը խայտա» գրքի հեղինակ Քեմալ Յալչընը, որը կարծես ազնիվ է հայերի նկատմամբ իր վերաբերմունքով, հաշտության, սիրո ու բարեկամության կողմնակից է: Վերջինս Ամասիայի շրջանում թուրքերի հետ ամուսնացած ու դրա շնորհիվ միայն ողջ մնացած պառավ հայ կանանց է փնտրել՝ նրանց հետ անձամբ զրուցելու եւ ճշմարտությունն իմանալու համար: Եվ պարզվել է, որ նրա հայրենակիցները, անգամ համալսարանական կրթություն ստացած մարդիկ, ոչ միայն անտեղյակ են հայերի մեծ ողբերգությանը, այլեւ հակառակը գիտեն. հայերն են կոտորել թուրքերին, ոչ միայն չգիտեն, որ այսօրվա Թուրքիայի մի զգալի մասը եղել է հայերի պատմական հայրենիքը, այլեւ այդ մասին բարձրաձայն խոսելն անգամ համարում են խիստ վտանգավոր.

*«Մուլթան քեռկինս.*

*- Քեմա՛ն, ըսել է նախապես Թուրքիո մեջ Հա՞յ կար:*

*Համալսարանի երկրագործական բաժնի վերջին դասարանի ուսանող Յոզկյուր.*

*- Հորեղբա՛յր, Հայերն են որ Թուրքեր սպաններ են, ցեղասպանություն կատարեր են, Ռուսերուն ալ օգներ են:*

*Անատոլու լիսեի վերջին դասարանի ուսանող Նէվրալ.*

*- Քեռի՛, դուն արժակուրդի եկար.... Երթանք ծովեզերք, լավ մը հանգստանանք: Գլխուդ փորձանք մի՛ բերեր»* (Քեմալ Յալչըն, Հոգիս քեզմով կը խայտա, Երուսաղեմ, 2004, էջ 37):

Գրողի խոսք է սա, որ գրեթե լիարժեք պատկերացում է տալիս հայերի եւ ցեղասպանության առթիվ այսօրվա Թուրքիայի հանրային կարծիքի մասին: Գնահատելի է ճշմարտությունն անմիջական աղբյուրից իմանալու թուրք գրագետի ջանքը: Ուզում ես հավատալ նրա անկեղծությանը, որ բերում է թրքերեն առածը՝ **«Արեւը ցեխով կարելի չէ ծեփել»**, այսինքն՝ պետական տեսակետին հակառակ՝ նա համոզված է, որ անիմաստ է ցեղասպանությունն ուրանալը: Նա նաեւ ներողություն է խնդրում կատարվածի համար եւ քավության խոսք է ուղղում մեզ.

*«Սիրելի՛ Հայ եղբայրներս,*

*Մեր հարյուրամյակի մեծագույն ցավը մարդկության ճակտի սեւ մուրը եղող ջարդերուն, «աքսորի ընթացքին դրագրված կերպով սպաննված», կյանքը կորսնցուցած բոլոր Հայերու եւ Ասորիներու հիշատակին առջեւ կը խոնարհիմ, ձեր ցավերը կ՛ընդունիմ որպես իմ ցավը: Որպես թուրք գրագետ, իմ անունով ձեզմե եւ մարդկութենեն ներողություն կը խնդրեմ... մարդկության ճակտին մուրը՝ այս մեծ աղետին պատճառ եղողները, դրագրող եւ իրականացնողները անիծյալ թող ըլլան»* (նույն տեղում):

Բայց նույն մտավորականը, որ հավատացած է, թե ամեն ժողովրդի մեջ լավն էլ կա, վատն էլ, «եղբայրության կողմնակիցներ ալ կան, եղբոր արյան ծարավներ ալ», առանձնացնում է, իր կարծիքով, լավագույն հայերին ու լավագույն թուրքերին. *«Հայ ազգի պատմության մեջ սրբազան գիտնական մը՝ Մեսրոպ Մաշտոցի նման, սերը հաշտությունը, բարեկամությունը, գիտությունը պաշտպանող մեծ մարդիկ կան: Թուրք ազգի պատմության մեջն ալ, Յունուս Էմրեի նման հաշտությունը, եղբայրությունը, սերը ամեն բանե վեր համարող մարդիկ ապրած են: Մեսրոպ Մաշտոցները ու Յունուս Էմրեները նույն հողերը, նույն աշխարհագրությունը կը բաժնեն: Ես ալ այս հողերուն մեկ զավակն եմ: Հետեւաբար, հաշտության, եղբայրության, սիրո եւ գիտության անոնց հարթած ճանապարհին որպես մեկ ճամփորդը, որպես մեկ գրագետը ըլլալեն հպարտ եմ»* (նույն տեղում):

Միլիոնավոր անմեղ հայերի հետ միասին Գրիգոր Զոհրապներ ու Դանիել Վարուժաններ, Սիամանթոներ ու Ռուբեն Սեւակներ, Երուխաններ ու Թլկատինցիներ, Խաժակներ ու Ակնունիներ հոշոտելով սպանած, մեր հողերն ու աշխարհագրությունը զավթած պետության ու ժողովրդի զավակ թուրք գրագետի 2002 թ. նոյեմբերի 3-ին գրած խոսքն է սա, որը պարզապես նշանակում է երկու՝ հայ եւ թուրք ժողովուրդների հավասարեցում, եղեռնագործ դահճի եւ զոհի հավասարեցում, մեզ կոտորած ու մեր երկիրը բռնազավթած թուրքի ու նրա մեղքով հայրենազուրկ դարձած սփյուռքահայի հավասարեցում, կախողի ու կախվածի, սպանողի եւ սպանվածի հավասարեցում... Ուրեմն ողջամիտ, բարեխիղճ, եղբայրասեր ու հայասեր թուրք գրագետն անգամ հարցը բրքավարի է պատկերացնում՝ առաջարկելով սեր ու հաշտություն առանց զղջման ու հատուցման:

Հայոց ցեղասպանությունը աշխարհի մարդկությանը տեսանելի եւ ճանաչելի դարձնելու, պատերազմներն ու նման աղետները դատապարտելով կանխելու նպատակով ու մարդկությունից վերաբերմունք ակնկալելով էլ իր պոեմը գրել է Հ. Շիրազը՝ կանխազգալով, որ այդ աղետը, միջազգայնորեն չճանաչվելու ու չդատապարտվելու դեպքում, կրոնական ու աշխարհաքաղաքական պատճառներով, մեծ կամ փոքր չափերով հետո կրկնվելու է Վիետնամում ու Աֆղանստանում, Սումգայիթում, Նախիջեւանում, Կիրովաբադում ու Բաքվում, Չիլիում ու Հարավսլավիայում, Չեչնիայում, Ինդոնեզիայում, Իրաքում, Գրոզնիում ու Բուդյոննովսկում, Մոսկվայում ու Բեսլանում, Վաշինգտոնում ու Լոնդոնում: Ամերիկան, Ռուսաստանն ու եվրոպական տերությունները՝ Ֆրանսիան, Գերմանիան ու Անգլիան, որ, աչքները փակած հայոց ցեղասպանության հանդեպ, իրենց ներսում կամավոր ընդունել են թուրքական ընդարձակվող քաղցկեղը, նոր-



նոր են ճաշակում իրենց հովանավորչության պտուղները եւ դեռ շատ են տառապելու միջազգային ահաբեկչության անակնկալ հարձակումներից: Մարդկության քնած խիղճն արթնանում է մեծ ուշացումով, ցեղասպանության ճանաչման գործընթացը նոր-նոր է հուն մտնում, եւ հիմա արդեն 15 տերություններ պետականորեն ճանաչում են այն ու դատապարտում:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***

***Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***

---

**ՇԵՆՈՒԴԱ Գ**

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՄԱՍ Դ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԲԱՑԱՐՁԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

*Սկիզբը՝ 2004-ի թիվ 23-24, 2005-ի թիվ 1-7, 9, 11-14*

### ՔՐԻՍՏՈՍԻ ԲԱՑԱՐՁԱԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն բանից հետո, որ խոսեցինք Քրիստոսի աստվածային հատկությունների՝ անժամանակության ու հավիտենականության, ամենուրեքության ու Հայր Աստծո Որդի լինելու եւ մնացածի մասին, որոնք ապացուցում են Նրա աստվածությունը եւ պատկանում միայն Նրան, այժմ անցնենք մի ուրիշ մասի հանգամանալից շարադրության՝ ապացուցելու համար Քրիստոսի աստվածությունը՝ այս անգամ ցույց տալով բազմաթիվ երեւույթների վրա տարածվող Նրա բացարձակ իշխանությունը: Մենք կխոսենք այն իշխանության մասին, որ Նա ունի արարչության՝ բնության, կյանքի եւ մահվան, հրեշտակների եւ դեւերի վրա, ինչպես նաեւ օրենքի, արքայության եւ վերջապես՝ հենց Իր վրա:

### ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Երկրային կյանքում Տեր Հիսուսն իշխանություն ուներ բնության վրա բոլոր առումներով: Նրա իշխանությունը տարածվում էր ծովի, քամու եւ ալիքների, բույսերի եւ կենդանիների, լույսի, երկրի եւ բլուրների, փակ դռների եւ բնության օրենքների վրա: Երբ Նա հրամայում էր, Նրան հնազանդվում էին իրեւ իշխանություն ունեցողի, ինչը Նրա աստվածության ապացույց է:

Ստորեւ հանգամանորեն կքննարկենք այս ամենը:

1. Նրա իշխանությունը ծովի, քամու եւ ալիքների վրա

ա) Մարկոս ավետարանիչն ասում է. «Մեծ մրրիկ բարձրացավ, որն ալիքները նավի մեջ էր շպրտում, այնպես, որ նավը գրեթե լցվում էր»: Աշակերտները վախենում են, եւ Տերն ի՞նչ է այդժամ անում: Գրված է. «Վեր կացավ սաստեց քամուն ու ծովին՝ ասելով. «Դադարի՛ր, պապանձվի՛ր», եւ քամին դադարեց, ու մեծ խաղաղություն տիրեց»: Նավում գտնվողները եղածից այնպես են ազդվում, որ ասում են. «Արդյոք ո՞վ է Սա, որ նույնիսկ ծովն ու քամին են Նրան հնազանդվում» (Մարկ. 4. 37, 39, 41):

Իսկապես, Աստծուց բացի ո՞վ է, որ իշխանություն ունի ծովի, քամու եւ ալիքների վրա: Նրանից բացի ո՞վ է, որ հրամայում է, եւ Նրան հնազանդվում են: Սա մեզ չի՞ հիշեցնում սաղմոսի հետեւյալ խոսքերը. «Տե՛ր Աստված զորությունների, ո՞վ է Քեզ նման, հզոր ես Դու, Տեր... Դու տիրում ես ծովի զորություններին եւ նրա ալիքների խռովությունը հանդարտեցնում» (Սաղմ. 88.9-10):



բ) Ծովի վրա ունեցած Նրա իշխանությունը ցույց է տրվում նաեւ սբ Հովհաննես ավետարանչի կողմից. «Մթնեց, սակայն Հիսուսը դեռ չէր եկել նրանց մոտ: Իսկ ծովը սաստիկ քամուց ալեկոծվում էր: Երբ շուրջ քսանհինգ կամ երեսուն ասպարեզ նավարկել էին, տեսան Հիսուսին *ծովի վրայով քայլելիս* ու նավին մոտենալիս եւ զարհուրեցին» (Հովհ. 6.17-19):

Սբ Մարկոսը նույնպես հիշատակում է այս հրաշքը՝ ասելով. «Երբ երեկո եղավ, նավը ծովի մեջտեղում էր, իսկ Ինքը՝ ցամաքում: Եվ տեսավ, որ նրանք հոգնակոծ էին լինում, քանի որ քամին հանդիպակաց էր: Ուստի գիշերվա չորրորդ պահի մոտ եկավ նրանց մոտ՝ *քայլելով ծովի վրայով*... Երբ նրանք տեսան... աղաղակ բարձրացրին... Նա նրանց մոտ՝ նավը բարձրացավ, եւ քամին դադարեց...» (Մարկ. 6.47-51):

գ) Տեր Հիսուսը ոչ միայն Ինքն է քայլում ծովի վրայով, այլեւ սբ Պետրոսին այդպես քայլել տալիս: Պետրոսը, տեսնելով Տիրոջը ջրերի վրայով քայլելիս, ասում է. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայիր ինձ ջրերի վրայով գալ Քեզ մոտ»: Այնուհետեւ գրված է. «Պետրոսը նավից իջավ եւ ջրերի վրայով քայլելով՝ Հիսուսի մոտ գնաց: Բայց սաստիկ քամին տեսնելով՝ վախեցավ եւ երբ սկսեց ընկղմվել, աղաղակեց. «Տե՛ր, փրկի՛ր ինձ»: Հիսուսն իսկույն ձեռքը երկարեց, նրան բռնեց ու ասաց. «Թերահավա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր»: Երբ նավը բարձրացան, քամին հանդարտվեց» (Մատթ. 14.28-32):

Այս ամենն իհարկե Նրա իշխանությամբ եւ Նրա իսկ աստվածային զորությամբ է կատարվել: Ո՞ւր է ֆիզիկայից հայտնի ձգողականության ուժի օրենքը: Մի՞թե այսպիսի օրենքներն էլ Նրա կողմից չեն ստեղծված, քանի որ «ամեն ինչ Նրանով եղավ» (Հովհ. 1.3):

2. Չենք կարող մոռանալ նաեւ, թե ինչ տեղի ունեցավ Տեր Հիսուսի խաչելության ժամանակ:

Երկիրը շարժվեց, վեմերը ճեղքվեցին, եւ տաճարի վարագույրը պատռվեց (Մատթ. 27.51), այլեւ խավար պատեց ամբողջ երկրին ժամը վեցից մինչեւ ինը (Մարկ. 15.33, Ղուկ. 23.44-45) *(այսինքն՝ կեսօրվա ժամը տասներկուսից մինչեւ ժամը երեքը - թրգմ.)*:

3. Քրիստոսի իշխանությունը երեւում է նաեւ ձկան մեծ որսի երկու հրաշքների ժամանակ՝ առաջին անգամ, երբ առաքելության է կանչում Պետրոսին (Ղուկ. 5.4-7), եւ երկրորդ անգամ՝ Իր հարությունից հետո (Հովհ. 21.5-11): Այս հրաշքները ցույց են տալիս Տիրոջ իշխանությունը նաեւ կենդանիների վրա. Նա գիտի, թե ձկները որտեղ են գտնվում եւ ինչպես նրանց հավաքել մի տեղ՝ ցանցերի մեջ որսացվելու համար:

*Շարունակությունը՝ էջ 8*

ՇԵՆՈՒԴԱ Գ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՄԱՍ Դ

*Սկիզբը՝ էջ 7*

4. Բնության վրա ունեցած Նրա իշխանությունը երեւում է նաեւ, երբ Նա անիծում է թզենին, եւ այն անմիջապես չորանում է (Մատթ. 21.19): Սա ցույց է տալիս բույսերի վրա Նրա ունեցած իշխանությունը:

5. Այս իշխանությունը երեւում է նաեւ նրանում, որ Նա Իր սոսկ հրամանով կամ հպմամբ, եւ կամ նույնիսկ միայն Իր կամենալով, բժշկում է հիվանդություններ, հատկապես անբժշկելիները, ինչպես օրինակ՝ բորոտություն, կուրություն, համրություն, խլություն, կաղություն եւ անդամալուծություն:

6. Բնության վրա Նրա ունեցած իշխանության մի ուրիշ օրինակ է Նրա համբարձումը երկինք, որը հիշատակված է Գործք 1.9, Մարկ. 16.19 եւ Ղուկ. 24.51 տեղիներում:

7. Ուրիշ օրինակներ են փակ դռների միջով Նրա հայտնվելը աշակերտների մեջ (Հովհ. 20.19) եւ Նրա հարությունը, երբ դուրս եկավ կնքված եւ քարով փակված գերեզմանից: Այս ամենը պատահեց Նրա իշխանությամբ եւ Նրա աստվածության զորությամբ:

8. Վերոնշյալներին կարելի է ավելացնել այն հրաշքները, որ տեղի ունեցան Կույսից Նրա ծննդյան ժամանակ, եւ Նրա ծննդյան վայրը ցույց տալու համար աստղի՝ զարմանահրաշ կերպով շարժվելը:

### ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՎՐԱ

1. Եբրայեցիներին ուղղված թղթի առաջին երկու գլուխներում Պողոս առաքյալը բացատրում է, թե ինչպես է Տեր Հիսուսն առավել բարձր, քան հրեշտակները (Եբր. 1.4)՝



Նրա աստվածությունն ապացուցող վկայություններ բերելով, որոնցով նշում է Նրա Աստծո Որդի լինելը, Մեծության աջ կողմում նստելը, Հայր Աստծո՝ Նրան դիմելը՝ ասելով. «Քո աթոռը, Աստված, հավիտյանս հավիտենից է», եւ Նրա ոտքերի տակ ամեն ինչ հնազանդեցնելը:

2. Գրված է, որ Հիսուսի՝ անապատում փորձության ենթարկվելուց հետո «հրեշտակները սպասավորում էին Նրան» (Մարկ. 1.13). «Հրեշտակները մոտեցան ու սպասավորում էին Նրան» (Մատթ. 4.11):

3. Գրված է, որ հրեշտակները հնազանդվում են Նրան. «...Հիսուս Քրիստոսի, ով գնացել է երկինք եւ Աստծո աջ կողմում է, եւ հրեշտակները, իշխանություններն ու զորությունները հնազանդվում են Նրան» (Ա Պետ. 3.21-22): Ո՞վ է նա, ում հրեշտակները սպասավորում են, եւ իշխանությունները, զորություններն ու հրեշտակները՝ հնազանդվում, եթե ոչ՝ միայն Աստված:

4. Նաեւ գրված է Նրա մասին. «Կերկրպագեն Նրան Աստծո բոլոր հրեշտակները» (Եբր. 1.6), այլեւ՝ «...որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով իջնի ամեն ծունր՝ *երկնայինների*, երկրայինների...» (Փիլ. 2.10): Անշուշտ հրեշտակները չեն կարող երկրպագել կամ ծնրադրել որեւէ այլ մեկի առաջ, բացի Աստծուց:

«Հայտնության» մեջ էլ ասվում է, որ չորս կենդանիներն ու քսանչորս երեցներն ընկնում են Նրա առաջ՝ երգելով. «Արժանի ես գիրքը վերցնելու եւ դրա կնիքը բանալու» (5.9):

5. Շատ դեպքերում է ցույց տրվում, որ հրեշտակները Քրիստոսի՛ հրեշտակներն են, եւ Նա՛ է նրանց ուղարկում:

ա) Մատթ. 13.41-42. «Մարդու Որդին *կուղարկի Իր հրեշտակներին*, եւ *Նրա արքայությունից* կհավաքեն բոլոր գայթակղություններն ու նրանց, ովքեր անօրենություն են գործում, եւ վառ հնոցը կգցեն»:

Ո՞վ ունի իշխանություն Դատաստանի օրը հրեշտակներին ուղարկելու, եթե ոչ՝ միայն Աստված:

բ) Մատթ. 24.30-31. «Եվ կտեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրա, զորությամբ ու մեծ փառքով: Նա մեծաձայն փողով *կուղարկի Իր հրեշտակներին*, եւ [տիեզերքի] չորս կողմից՝ երկնքի մի ծագից մյուսը, կհավաքեն *Նրա* ընտրյալներին»:

Այս երկու հատվածներից նկատում ենք, որ հրեշտակները Նրա՛ հրեշտակներն են, արքայությունը՝ Նրա՛ արքայությունը, եւ ընտրյալները՝ Նրա՛ ընտրյալները: Սա երբեք չի կարող վերաբերել մարդ էակին կամ որեւէ այլ արարածի:

6. Հրեշտակները միայն Աստծուն են պատկանում, քանի որ նրանք Աստծո՛ հրեշտակներն են, ինչպես վկայում է Սուրբ Գիրքը:

* (Սաղմ. 102.20). «Օրհնեցե՛ք Տիրոջը, *Նրա բոլո՛ր հրեշտակներ*»:

* (Սաղմ. 103.4, Եբր. 1.7). «Ով *Իր հրեշտակներին* ստեղծեց իբրեւ հոգիներ եւ Իր սպասավորներին՝ իբրեւ կրակի բոց»:

* (Սաղմ. 90.11, Մատթ. 4.6). «*Իր հրեշտակներին* պատվիրել է քեզ համար, որ քեզ պահեն քո բոլոր ճանապարհներին»:

* (Հայտ. 3.5). «Ով հաղթի, սպիտակ կհագնի... եւ կխոստովանեմ նրա անունը Իմ Հոր եւ *Նրա հրեշտակների* առաջ»:

* (Դան. 6.22). «Իմ Աստվածն ուղարկեց *Իր հրեշտակին* եւ փակեց առյուծների բերանը»:

*Ուրեմն ինչպե՞ս կարող են հրեշտակները միաժամանակ լինել ե՛ւ Աստծունը, ե՛ւ Քրիստոսինը, եթե երկուսն էլ նույն Մեկը չեն:*

Մի ուրիշ լավ վկայություն կա «Հայտնության» գրքում. «Եվ սուրբ մարգարեների Տեր Աստվածն ուղարկեց *Իր հրեշտակին* ցույց տալու Իր ծառաներին, թե ինչ է շուտով կատարվելու» (22.6), եւ միեւնույն գլխում ասվում է նաեւ. «Ես՝ Հիսուսս, ուղարկեցի *Իմ հրեշտակին* վկայելու սա ձեզ» (22.16, համեմատիր Հայտ. 1.1-ի հետ):

*Շարունակելի*

***Թարգմանությունը՝***
***Ս. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆի***

---

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

# ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 2*

«Եվ զարմանում էին, որ նա խոսում էր այդ կնոջ հետ, բայց նրանցից ոչ ոք չասաց, թե՝ ի՞նչ ես ուզում կամ ի՞նչ ես խոսում նրա հետ»: Ինչո՞ւ նրանք զարմացան: Նրա հեզության եւ խոնարհության վրա, այն բանի վրա, որ Նա, լինելով այդքան մեծ, իրեն թույլ տվեց այդպիսի խոնարհությամբ զրուցել աղքատ, մանավանդ սամարացի կնոջ հետ: Եվ չնայած զարմացած էին, սակայն չհարցրին զրույցի պատճառը: Այդպես նրանք սովորեցին կատարել աշակերտի իրենց պարտականությունները, այդպես նրանք Նրա երկյուղով ու Նրա հանդեպ հարգանքով լցվեցին: Չնայած Նրա մասին պատշաճ պատկերացում չունեին, սակայն նայեցին Նրան՝ իբրեւ հրաշալի մարդու, եւ Նրա նկատմամբ մեծ հարգանք տածեցին: Ճիշտ է՝ շատ դեպքերում նրանք դրսեւորում էին մեծ համարձակություն, ինչպես, օրինակ, Հովհաննեսը Նրա գիրկն ընկավ, կամ աշակերտները, մոտենալով Նրան, հարցրին. «Մեզնից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ», իսկ Զեբեդեոսի որդիները խնդրեցին Նրան, որ իրենցից մեկը Նրա աջ, մյուսը Նրա ձախ կողմում նստի: Ինչո՞ւ այժմ նրանք չհարցրին Նրան: Որովհետեւ այն բոլոր մյուս դեպքերը վերաբերում էին իրենց, եւ այդ պատճառով էլ նրանք կարիք ունեին հարցնելու, բայց այժմյան իրադրությունը ոչնչով չէր վերաբերում իրենց: Հովհաննեսը, որը Նրա գիրկն ընկավ, շատ ժամանակ անց, երբ Նրա հետ առանձնակի մտերմությունից էր օգտվում եւ միանգամայն համոզված էր, որ Քրիստոս իրեն սիրում է, ինչպես ասվում է՝ նա այն աշակերտն էր, ում սիրում էր Հիսուս:

Իսկ ի՞նչը կարող է համեմատվել այսպիսի երանության հետ: Բայց մենք, սիրելինե՛ր, չսահմանափակվենք միայն առաքյալին երանելով, այլ անենք այնպես, որպեսզի մենք էլ երանելիների թվում լինենք. նմանվենք ավետարանչին եւ դրա համար տեսնենք, թե ինչպես նա ձեռք բերեց այդքան մեծ սեր: Ինչո՞վ: Նա թողեց հորը, նավակը, ուռկանը եւ հետեւեց Քրիստոսին: Այդպես վարվեցին ե՛ւ ինքը, ե՛ւ իր եղբայրը, ե՛ւ Պետրոսը, ե՛ւ Անդրեասը, ե՛ւ մյուս առաքյալները: Հատուկ ի՞նչ կատարվեց, որից բխեց Քրիստոսի մեծ սերը: Ինքը՝ ավետարանիչը, իր մասին ոչինչ այդպիսի բան չի ասում, բացի նրանից, որ իրեն Փրկիչը սիրում է, սակայն այն առաքինությունների մասին, որոնց համար սիրելի էր դարձել ինքը, համեստորեն լռում է: Որ Քրիստոս սիրում էր նրան մի հատուկ սիրով, այդ բոլորին էր հայտնի. սակայն երբեք չենք տեսնում, որ նա մյուսներից առանձին խոսի Քրիստոսի հետ կամ Նրան ինչ-որ բան հարցնի, ինչպես այդ հաճախ անում էին Պետրոսը, Փիլիպպոսը, Հուդան եւ Թովմասը. միայն այն ժամանակ ենք այդ տեսնում, երբ Հովհաննեսն ուզում էր գոհացնել իր աշակերտակցին եւ հնազանդվեց նրան: Երբ առաքյալների գլուխը նրան ակնարկ արեց, այնժամ էլ նա հարցրեց Հիսուսին, քանի որ բոլոր առաքյալները մեծ սեր էին տածում իրար նկատմամբ: Այսպիսով տեսնում ենք, որ նրանք միասին ե՛ւ տաճար էին գնում, ե՛ւ միասին խոսում էին ժողովրդի հետ: Ճիշտ է, Պետրոսը միշտ մեծ ջերմեռանդությամբ է ե՛ւ խոսում, ե՛ւ գործում, իսկ վերջում Հիսուսից լսում. «Սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանք»: Իսկ բոլորից շատ սիրողը անշուշտ ինքն էլ սիրված էր: Բայց այս ակնհայտորեն բխում էր Հիսուսի նկատմամբ սիրուց, նաեւ Իր՝ Հիսուսի սիրուց: Ուրեմն, ի՞նչն էր մղում Հովհաննեսին ավելի սիրելու: Ինձ թվում է՝ այն, որ այս այրը ամենահեզն ու ամենախոնարհին էր, որովհետեւ նա երբեք իրեն ուրիշներից չէր գերադասում: Եվ թե որքան մեծ է այդ առաքինությունը, հայտնի է Մովսեսի օրինակից, որին հենց այդ առաքինությունն էլ դարձրեց այդքան մեծ ու փառավոր:

Ոչ մի բան համեմատելի չէ խոնարհության հետ: Այդ պատճառով էլ Քրիստոս հենց դրանից էլ սկսեց երանիների ուսուցումը՝ մտադրվելով ասես հսկայական կառույցի հիմք դնել, Նա ամենից առաջ դրեց խոնարհությունը: Առանց դրա անհնարին է, անհնարին է փրկվել. մարդը որքան էլ շատ աղոթի, պահք պահի, ողորմություն տա, բայց այդ անի հպարտությամբ եւ չունենա խոնարհություն, այդ ամենը զազրելի է: Բայց եթե այդ ամենն արվում է խոնարհությամբ, ուրեմն փափագելի է, դրվատելի, գովելի: Ուրեմն խոնարհեցնենք մեզ, սիրելինե՛ր, խոնարհեցնենք, եւ եթե միշտ արթուն լինենք, այդ առաքինությունը մեզ համար շատ հեշտ կլինի: Իրականում ի՞նչն է քեզ մղում հպարտանալու, ո՛վ մարդ, մի՞թե դու չես տեսնում քո ոչնչությունը, քո կամքի հակվածությունը դեպի չարը: Մտածի՛ր վախճանիդ օրվա մասին, հիշի՛ր մեղքերիդ բազմությունները: Հնարավոր է, որ շատ մեծ գործեր ես արել, այդ պատճառով էլ մտածում ես, թե մեծ մեկն ես: Բայց դրանով իսկ կորցնում ես ամեն բան: Ոչ այնքան մեղավորին, որքան առաքինի մարդուն է անհրաժեշտ հոգ տանել խոնարհ լինելու մասին: Ինչո՞ւ է այդպես: Որովհետեւ մեղավորը կարիք ունի իր խղճմտանքի հետ հաշտության, իսկ առաքինի մարդը, եթե չի հսկում իրեն, ասես քամու միջոցով վեր բարձրացած, նույն պահին էլ ընկնում է՝ նման հայտնի փարիսեցուն: Դու օգնում ես աղքատներին, բայց տալիս ես նրանց ոչ ամեն ինչ, իսկ Աստված մեկն է Իր՝ բոլոր քեզ նման ծառաների համար: Այդ պատճառով էլ մերձավորի թշվառության մեջ տեսնելով քո սեփական թշվառությունը եւ ուրիշների մեջ տեսնելով քո բնությունը՝ հարկ է առավել խոնարհվել: Հնարավոր է՝ մեր նախնիներն էլ են այդպիսին եղել, իսկ եթե մենք ձեռք ենք բերել հարստություն, ապա այն կրկին կարող ենք կորցնել: Ի՞նչ է հարստությունը. ունայն ստվեր, ծուխ, որ ցնդում է, խոտի ծաղիկ, կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ոչնչի ծաղիկ: Ի՞նչ ես հպարտանում խոտով: Մի՞թե հարստացողները նրանք չեն, որոնք գող են, շնացող, սանձարձակ, գերեզմաններ թալանող: Կամ էլ քեզ հպարտացնում է այն, որ այդպիսի ընկերակիցնե՞ր ունես կամ էլ սիրում ես պատի՞վը: Բայց պատվի [արժանանալու] համար ողորմությունից ավելի ի՞նչ միջոց կա. հարստությամբ եւ իշխանությամբ ձեռք բերված պատիվը ատելի է ուրիշների համար, իսկ ողորմածներին պատիվ ցույց է տրվում բարյացակամորեն: Եվ եթե մարդիկ են այդպիսի պատիվ ցույց տալիս ողորմածներին եւ նրանց ամենայն բարիք ցանկանում, ապա ուրեմն մտածի՛ր, թե ինչպիսի պարգեւներ կստանան նրանք մարդասեր Աստծո կողմից:

Փնտրենք այնպիսի հարստություն, որը հավիտենական է, որը երբեք չի կորչում, որպեսզի այստեղ մեծ լինելով եւ այնտեղ փառավորվելով՝ արժանանանք հավիտենական բարիքներին ու պարգեւներին մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդասիրությամբ, որին Հոր եւ Սուրբ Հոգու հետ վայել է փառք այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:



***Աշխարհաբարի վերածեց***
***Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբուլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**Հեռախոս՝**
**(0+231) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 15.8.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**